ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

2024

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

JUREMONIA
JUSTICE REFORM MONITORING IN ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

NETHERLANDS HELSINKI COMMITTEE
PENAL REFORM INTERNATIONAL
SOCIAL JUSTICE NGO
CIVIL SOCIETY INSTITUTE ARMENIA
Protection of Rights Without Borders NGO

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremonia.am) ծրագրի շրջանակում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցի հեղինակներն են՝ Անահիտ Մկրտչյանը, Հասմիկ Հարությունյանը:
Հետազոտության շրջանակներում շահագրգիռ անձանց հետ խորին հարցազրույցներն իրականացրել են՝ Դիանա Հարությունյանը, Անահիտ Մկրտչյանը, Հասմիկ Հարությունյանը:
Զեկույցը խմբագրել է՝ Արաքս Մելքոնյանը:

©2024 «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 11, բն. 24
Հեռախոս՝ +374 098 505 303
Էլ. հասցե՝ info@prwb.am
Կայքէջ՝ www.prwb.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԻԺ 7

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՓՈՒԼԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 13

Ի՞նչ հանցանքների համար են նշանակվում հանրային աշխատանքները որպես պատիժ. վիճակագրություն. 14

Ի՞նչ հանգամանքներ է դատարանը հաշվի առնում. 16

Մեղադրյալի առողջական վիճակը/ հաշմանդամությունը. 16

Մեղադրյալի համաձայնությունը. 18

Հանրային աշխատանքների տևողությունը. 21

Հանրային աշխատանքների կատարումը դատապարտյալի աշխատանքից ազատ ժամանակահատվածում. 23

Էլեկտրոնային հսկողություն. 23

Տուգանքի փոխարինումը հանրային աշխատանքներով. 25

Հանրային աշխատանքների փոխարինումն ազատազրկմամբ. 27

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը՝ ազատազրկման փոխարինումը հանրային աշխատանքներով. 29

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 29

Ռիսկերի և կարիքների գնահատում. 30

Վերասոցիալականացման միջոցառումներ. 31

Պրոբացիայի շահառուի ուղեգրումը գործատուի մոտ. համագործակցության խնդիրներ. 31

Գործատու կազմակերպությունների ցանկ, առաջարկվող աշխատանքներ. 35

Առաջարկվող աշխատանքների բնույթը. 36

Վերահսկողությունը. 38

Ոլորտում ներգրավված մարմինների կարողությունների հզորացում. 39

Վաղեմության ժամկետն անցնելու խնդիրներ. Շահառուին վարույթն իրականացնող մարմին՝ դատարան հարկադրաբար ներկայացնելը. 40

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41

ՆԱԽԱԲԱՆ

Արդեն շուրջ մեկ տասնամյակ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է պատժողական արդարադատությունից վերականգնողական արդարադատության անցման քաղաքականություն, ինչի գործում կենտրոնական դերակատարում ունի պրոբացիայի ծառայության ներդրումն ու դրա հետագա կատարելագործումը: Պրոբացիայի ինստիտուտը ներդրվել է 2016 թ.-ի մայիսի 17-ին՝ «Պրոբացիայի մասին» օրենքի ընդունմամբ, որով ստեղծվել է Քրեակատարողական ծառայությունից անկախ Պրոբացիայի ծառայությունը: Պրոբացիայի ինստիտուտի ներդրումը և Պրոբացիայի ծառայության ստեղծումը պայմանավորված էր քրեական արդարադատության ոլորտում պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելու անհրաժեշտությամբ, որում իրավախախտում կատարած անձանց վերականգնումն ու վերաինտեգրումը հասարակության մեջ դիտարկվում էր որպես պարտադիր բաղադրիչ: 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքում վերաձևակերպվել են պատժի նպատակները, որում առաջին անգամ «ուղղել» եզրույթի փոխարեն կիրառվել է «վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին» եզրույթը: **«Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները[1]»**, ինչը ենթադրում է, որ պատժի կրման առաջին օրվանից և ողջ ընթացքում անձի հետ տարվող բոլոր աշխատանքները պետք է ուղղված լինեն նրա՝ պատժից ազատման նախապատրաստմանը և սոցիալական վերականգնմանը:

Անձի վերասոցիալականացմանն ուղղված պատժատեսակներից է հանրային աշխատանքները: Այն դատարանի կողմից նշանակվող, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Վերջինս հանցանք կատարած անձի ուղղման և կրկնահանցագործությունների կանխման գործում կարող է էական դերակատարում ունենալ, ինչը կախված է ինչպես պրոբացիայի ծառայության և քրեական արդարադատության մասնակիցների արդյունավետ գործունեությունից, այնպես էլ համապարփակ օրենսդրական կարգավորումներից և պրակտիկայի հնարավորություններից:

Եվրոպական երկրներում հանրային աշխատանքները տարբեր ժամանակահատվածում ներառվել են ազգային օրենսդրություններում՝ միևնույն ժամանակ ենթարկվելով փոփոխությունների: Հանրային աշխատանքների հայեցակարգը տարբեր երկրներում ի սկզբանե ուղեկցվել է քննադատություններով՝ կապված պրակտիկ խնդիրների հետ, ինչպիսիք են՝ ի՞նչ տեսակի աշխատանք պետք է կատարվի, ինչպե՞ս պետք է աշխատանքը կազմակերպվի, վերահսկվի և գնահատվի: Կարևոր նշանակություն ունի նաև հանրային կարծիքը և հանրության հետ աշխատանքը[2]:

---

[1] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 55, մաս 2՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:

[2] Ֆրանսիայում այն կոչվում է հանրային նշանակության աշխատանք, ինչը Քրեական օրենսգրքում ներառվել է դեռևս 1983 թ.-ին որպես առանձին պատասխանատվության միջոց: Շվեդիայում այն նախ կիրառվել է փորձնական, ինչից հետո 1993 թ.-ին օրենսդրությամբ նախատեսվեց որպես ինքնուրույն պատժատեսակ: Նմանապես, փորձնական կիրառություն ստացել և հետո միայն օրենսդրությամբ որպես առանձին պատժատեսակ կիրառվել է նաև Դանիայում՝ 1992 թ.-ից, Նորվեգիայում՝ 1991

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ նաև ՀՀ) հանրային աշխատանքներ պատժատեսակը նշանակվում է կամ Քրեական օրենսգրքի Հատուկ մասով՝ որպես հիմնական պատիժ, կամ տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներով փոխարինելու կամ ազատազրկման ձևով պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում: Հաշվի առնելով հանրային աշխատանքների՝ որպես պատժի դերն ու արդյունավետությունը, աճի միտումները Հայաստանում, դրա պրակտիկ կիրառելիությունը, օրենսդրական հիմքերն ու այլ անհրաժեշտ հարցերը վեր հանելու նպատակով ուսումնասիրվել է ինչպես հանրային աշխատանքներին վերաբերելի ներպետական օրենսդրությունը, այնպես էլ դրա կազմակերպման և իրականացման պրակտիկան: Վերջինիս հատկացվել է առավել մեծ ուշադրություն՝ առկա բացերը և կատարելագործման ենթակա ուղղությունները վեր հանելու համար:

Զեկույցն անդրադառնում է հետևյալ հարցերին. հանրային աշխատանքների դերը որպես պատիժ, հանցանքները, որոնց կատարման համար նշանակվում են հանրային աշխատանքներ, դատարանի կողմից անձի վերաբերյալ հաշվի առնվող հանգամանքները, մեղադրյալի առողջական վիճակը/ հաշմանդամությունը, մեղադրյալի համաձայնությունը, հանրային աշխատանքների վերաբերյալ հանրային ընկալումը, հանրային աշխատանքների տևողությունը, հանրային աշխատանքների կատարումը դատապարտյալի աշխատանքից ազատ ժամանակահատվածում, էլեկտրոնային հսկողությունը, տուգանքի փոխարինումը հանրային աշխատանքներով, հանրային աշխատանքների փոխարինումն ազատազրկմամբ, ազատազրկման ձևով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով՝ հանրային աշխատանքներով փոխարինելը, ռիսկերի և կարիքների գնահատումը, վերասոցիալականացման միջոցառումները, պրոբացիայի շահառուի ուղեգրումը գործատուի մոտ, համագործակցության խնդիրները, գործատու կազմակերպությունների ցանկը, առաջարկվող աշխատանքները, վերահսկողությունը, ոլորտում ներգրավված մարմինների կարողությունների հզորացումը և վաղեմության ժամկետներն անցնելու խնդիրները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հանրային աշխատանքների՝ որպես պատժի արդյունավետությունը՝ վեր հանելով ոլորտում առկա օրենսդրական և պրակտիկ խնդիրները, կազմակերպման և վերահսկողության առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանցից բխող առաջարկություններ:

Հետազոտությունը ներառում է 2023թ. հուլիսից 2024թ. հունիսն ընկած ժամանակահատվածը, միաժամանակ հղումներ կատարելով ավելի ուշ ընդունված իրավական ակտերին և իրադարձություններին՝ որպես ի գիտություն:

թ.-ից սկսած: Իսլանդիայում հանրային աշխատանքները կիրառվել է որպես ազատազրկման փոխարինող 1995 թ.-ից: Հոլանդիայում այն սկսվել է կիրառվել դեռևս 1989 թ.-ից՝ 4 տարի փորձնական կիրառվելուց հետո միայն: Նախկին Հարավսլավիայի երկրներում հանրային աշխատանքները քրեական օրենսդրություն ներմուծվել է տարբեր կերպ: Սերբիայում, Մոնտենեգրոյում և Մակեդոնիայում որպես ինքնուրույն քրեական պատասխանատվության միջոց, Խորվաթիայում, Սլովենիայում, Բոսնիա Հերցեգովինայում՝ որպես նշանակված պատժի կամ տուգանքի փոխարինող:

Հետազոտությունն իրականացվել է Երևան քաղաքում, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում: Հետազոտության տարածքային ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունում հանրային աշխատանքներ պատժատեսակով առկա վարույթների թվի և տեղանքի հաշվառմամբ: Մասնավորապես, 2023թ.-ին Երևան քաղաքում եղել է 136, Արմավիրի մարզում՝ 64 վարույթ, Կոտայքի մարզում՝ 63 վարույթ,Արարատի մարզում՝ 25 վարույթներ, ինչը մյուս մարզերի համեմատ ընդգրկուն թիվ է և հնարավորություն է տվել կատարելու համապարփակ վերլուծություն:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են տարբեր մեթոդներ և դիտարկվել տվյալների ստացման տարբեր աղբյուրներ:

Ներպետական օրենսդրության ուսումնասիրություն. ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել հանրային աշխատանքների ոլորտը կարգավորող օրենսգրքերը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, օրենքներում փոփոխություն կամ լրացում նախատեսող նախագծերը, ռազմավարությունները, այլ իրավական փաստաթղթերը:

Միջազգային փորձի ուսումնասիրություն. դիտարկվել են ինչպես առանձին խումբ երկրներ, որտեղ ներդրվել և զարգացել է հանրային աշխատանքներ պատժատեսակը, վերջիններիս ձախողումները, դրանց պատճառներն ու լուծումները, այնպես էլ հաջողությունները և դրա հիմքում ընկած հանգամանքները: Ուսումնասիրվել են նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համապատասխան հանձնարարականները:

Խորին հարցազրույցներ. նախապես կազմված հարցաշարերի հիման վրա խորին հարցազրույցներ են անցկացվել հանրային աշխատանքների գործում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի և իրավասու մարմինների հետ.

- 3 հարցազրույց դատավորների հետ
- 7 հարցազրույց դատախազների հետ
- 10 հարցազրույց Պրոբացիայի ծառայության աշխատակիցների հետ
- 8 հարցազրույց հանրային աշխատանքների դատապարտված անձանց/պրոբացիայի շահառուների հետ
- 7 հարցազրույց աշխատանքի կատարման վայրերի/գործատուների հետ
- 1 հարցազրույց փաստաբանի հետ

Հարցումներ. հանրային աշխատանքների ոլորտում վիճակագրական տվյալների հավաքագրման, ինչպես նաև հարցազրույցներին շահագրգիռ կողմերի ներգրավման նպատակով տեղեկատվության հարցումներ են ուղարկվել ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ փաստաբանների պալատ, Հանրային պաշտպանի գրասենյակ, ՀՀ Դատական դեպարտամենտ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԻԺ

1970-ական թվականներից սկսած ժամանակակից քրեական արդարադատությունը, ի լրումն զգուշացումների և տուգանքի, որդեգրեց պատիժների նոր տեսակներ, որոնք օգտագործվում էին ազատազրկմանը որպես այլընտրանք: Այդ նոր պատժատեսակները կոչվեցին ազատազրկման իրական այլընտրանքներ, որոնց մեջ ամենից ընդունվածը հանրային աշխատանքը/ծառայությունն էր: Հանրային աշխատանքի կոնցեպտը հենվում է այն մոտեցման վրա, որ դրա միջոցով հնարավոր է

միաժամանակ հասնել երեք նպատակի՝ պատժի իրագործում, հանցանք կատարած անձի վերասոցիալականացում և հասցված վնասի վերականգնում: Վնասի հատուցման տեսանկյունից կա նաև մոտեցում, որ հանրային աշխատանքը էությամբ այնպիսին է, որ ունակ է փոխհատուցել կատարված արարքով հանրությանը պատճառած վնասը:

Հանրային աշխատանքը նվազեցնում է նաև ազատազրկման բացասական հետևանքները, բանտային միջավայրի ազդեցությունը, այլ դատապարտված անձանց հետ կապերի ձևավորումը և այլն: Ավելին, հանրային աշխատանքը նաև քիչ ծախսատար է համեմատած ազատազրկման հետ, քանզի այդ դեպքում պետությունը հանցանք կատարած անձի պահման համար ծախսեր է կատարում[3]: Ի տարբերություն ազատազրկման կամ ազատազրկման այլ այլընտրանքների՝ հանրային աշխատանքը մի քանի առավելություն ունի՝ այն չի խզում խախտում կատարած անձի և վերջինիս ընտանիքի միջև կապը, վերասոցիալականացումը հնարավոր է առանց մեկուսացման, այն պատասխանատվության զգացողություն է ձևավորում խախտում թույլ տված անձի մոտ: Նշված նպատակների մեջ առանձնակի կարևորվում է վերասոցիալականացման դերը, քանզի խախտում կատարած անձը իր համաձայնությունն է տալիս պատասխանատվության տեսակին, մինչդեռ աշխատանքի բնույթը կախված է իր կարողություններից:

Հանրային աշխատանքի պարագայում կարևոր է, որ անձը իր համաձայնությունը հայտնի և ընդունի պատժատեսակը, իսկ կատարվող աշխատանքը կատարվի առանց վճարի և ի շահ հանրության: Հանրային աշխատանքը չի կատարվում շահույթ ստանալու նպատակով, այլ այնպիսի հանրային մարմնի համար, որը գործում է հանրության համար, այդ աշխատանքից որոշ չափով անուղղակիորեն օգուտ է ստանում պետությունը, քանզի հակառակ դեպքում այդ աշխատանքը կկատարվեր հատուկ դրա նպատակով վարձված անձանց կողմից:

Այլ երկրների փորձի շրջանակներում, նշենք, որ, օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինայում Սպրսկա շրջանի օրենսդրությամբ առանձին սահմանվում է, որ հանրային կարևորության աշխատանք նշանակում է ցանկացած սոցիալապես օգտակար աշխատանք, որը չի խախտում անձի արժանապատվությունը և որը չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով[4]: Խորվաթիայի Քրեական օրենսդրության մեջ առաջին անգամ տեղ գտնելիս հանրային աշխատանքը կարգավորում է ստացել որպես ազատության պայմաններում ընդհանուր բարօրության համար կատարվող աշխատանք[5]: Սերբիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ հանրօգուտ աշխատանքը բնույթով պետք է այնպիսին լինի, որ չխախտի անձի արժանապատվությունը, պետք է որոշակի շոշափելի կամ

---

[3] Օրինակ՝ Ամերիկայի միացյալ նահանգներում այլընտրանքային միջոցների կիրառման ջատագովները ձևավորել են կարծիք, որ հանցանք կատարած անձին անվտանգ պահելու և բանտում համապատասխան պայմաններ ստեղծելու ծախսերը հավասար են հեղինակավոր ԲՈՒՀ-երում անձի սովորելու ծախսերին:
Խորվաթիայում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեկ անձի մեկ օրվա բանտային կյանքը արժե 400 խորվաթական կունա, մեկ օրվա պրոբացիան՝ 10 կունա, իսկ մեկ օրվա էլեկտրոնային վերահսկողությունը 100 կունա:

[4] Babić, M., & Marković, I. (2018). Alternativne krivične sankcije i krivično zakonodavstvo u BiH (način zakonodavnog regulisanja i iskustva u primjeni) [Alternative criminal sanctions and criminal law in BiH]. In Alternativne krivične sankcije (regionalna krivična zakonodavstva, iskustva u primeni i mere unapređenja) [Alternative criminal sanctions (Regional criminal law, experience in implementation and improvement measures] (pp. 201–217). Belgrade: Mission OSCE in Serbia, https://www.osce.org/mission-to-serbia/443830.

[5] Kambovski, V. (2015). Naučen i praktičen komentar na Krivičniot Zakonik na Republika Makedonija [Scientific and practical commentary on the Criminal Code of the Republic of Macedonia]. Skopje: Praven fakultet.

ոչ շոշափելի բարիք ստեղծի հանրության համար[6]: Շվեցարիայում չվճարվող հանրային աշխատանքը կատարվում է հանրության շահերի կամ կարիքավորներին օգնության համար[7]:

Քրեական և քրեակատարողական միջազգային հիմնադրամի կողմից նույնպես քննարկվել է հանրային աշխատանքների առավելությունը՝ նշելով հետևյալ առանձնահատկությունները՝

- Այն պատասխանատվություն է ձևավորում հանցանք կատարած անձանց մոտ
- Ապահովում է վերաինտեգրումը առանց մեկուսացման, սակայն պատասխանատվության միջոցի կիրառման հարցում հանրության ակտիվ մասնակցությամբ,
- Ապահովում է հանրությանն ու տուժողին պատճառված վնասի փոխհատուցումը[8]:

Հաշվի առնելով քրեական արդարադատության ոլորտի զարգացումներն ու պատժողական քաղաքականությունից վերականգնողականի անցման անհրաժեշտությունը՝ ԵՄ կողմից ձևավորվել են համապատասխան սկզբունքներ և ստանդարտներ՝ ուղղված անդամ երկրներին: Քննարկվող հարցի առնչությամբ առավել վերաբերելի փաստաթուղթը ԵՄ Նախարարների կոմիտեի կողմից 2017 թվականին ընդունված Համայնքային սանկցիաների և միջոցների վերաբերյալ հանձնարարականն է[9]: Հանձնարարականի ընդունման հիմքում ընկած է եղել այն համոզմունքը, որ համայնքային միջոցներն ու սանկցիաները հանցավորության դեմ պայքարի կարևոր միջոց են, նպաստում են հանցավորության բացասական հետևանքները կրճատելուն և կանխում ազատազրկման հետևանքով վրա հասնող բացասական հետևանքները: Ըստ հանձնարարականի՝ ազատազրկումը պետք է կիրառվի միայն որպես վերջին միջոց, քանի դեռ առկա են ավելի արդյունավետ պատասխանատվության միջոցներ: Համայնքային սանկցիան և միջոցները բացատրվում է որպես ցանկացած պատասխանատվության միջոց/սանկցիա, որը ազատության նկատմամբ որոշակի սահմանափակումների և պարտավորությունների կիրառմամբ հանցանք կատարած անձին պահում է հասարակության մեջ: Այն ներառում է պատասխանատվության ցանկացած միջոց, որը նշանակվում է դատական կամ ադմինիստրատիվ մարմնի կողմից, ինչպես նաև այն բոլոր միջոցները, որոնք կայացվում են ազատազրկման փոխարեն: Հանձնարարականում տեղ են գտել նաև անդամ երկրների ներպետական օրենսդրության ու պրակտիկայի ձևավորման համար անհրաժեշտ սկզբունքները.

- Հանրային միջոցները կարող են հանցանք կատարած անձին տրամադրել արդար և արդյունավետ վերահսկողություն, աջակցություն և ուղղորդում առանց ազատությունից զրկելու և կարող են մեծացնել սոցիալական ինտեգրման հնարավորությունները,
- Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն պատասխանատվության միջոցների տարբեր տեսակներ և դրանք պետք է հասանելի լինեն պրակտիկայում կիրառելու համար,

---

[6] Jakulin, V. (2018). Alternativne krivične sankcije i krivično zakonodavstvo Slovenije – Osnovna zakonska obilježja i iskustva primjene [Alternative Criminal sanctions and criminal legislation of Slovenia – Basic legal characteristics and experience of application]. In Alternativne krivične sankcije (regionalna krivična zakonodavstva, iskustva u primeni i mere unapređenja) [Alternative criminal sanctions (Regional criminal law, experience in implementation and improvement measures] (pp. 95–109). Belgrade: Mission OSCE in Serbia.

[7] Community service, electronic monitoring and probation assistance, Confederation of Switzerland, https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/crime-criminal-justice/execution-penal-sentences-justice/employment-labour-electronic-home-detention-supervision.html.

[8] Community service as an Alternative Criminal Sanction, Darko Radulovic, Ljubliana 70/2019, https://www.policija.si/images/stories/Publikacije/RKK/PDF/2019/04/RKK2019-04_DarkoRadulovic_CommunityServiceAsAnAlternativeCriminalSanction.pdf.

[9] Recommendation CM/Rec (2017) 3 of the Committee of Ministers to member States on the European Rules on community sanctions and measures, 22 March 2017, https://rm.coe.int/168070c09b.

- Միջոցների բնույթն ու տևողությունը պետք է համաչափ լինի կատարված հանցանքի լրջությանը և պետք է հաշվի առնել անհատական հանգամանքները,
- Պատասխանատվության միջոցները երբեք չպետք է իրենցում բժշկական կամ հոգեբանական միջամտության տարր ներառեն,
- Արգելվում է միջոցների ընտրության և կիրառության հարցում խտրականության ցանկացած դրսևորում՝ կախված անձի ռասայից, մաշկի գույնից, էթնիկական պատկանելիությունից ու ազգությունից, սեռից, տարիքից, հաշմանդամության հանգամանքից, սեռական կողմնորոշումից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, տնտեսական, սոցիալական կամ այլ ֆիզիկական կամ մտավոր վիճակից:
- Հանրային միջոցները պետք է հասանելի լինեն նաև օտարերկրացիներին և արդարացիորեն կիրառվեն,
- Բոլոր այն դեպքում, երբ համայնքային միջոցները իրենցում ներառում են տուժողների հետ կապ, վերջիններիս իրավունքները պետք է պատշաճ կերպով և էթիկական ստանդարտներին համահունչ ապահովվեն,
- Ներպետական օրենսդրությամբ պետք է համապատասխան մարմինների աշխատանքի անկախ մոնիթորինգի և կանոնավոր ստուգման հնարավորություն նախատեսվի, ինչը կիրականացվի որակավորված և փորձառու անձանց կողմից:

Առանձին պահանջներ նախատեսված են նաև համայնքային միջոցների ու պատասխանատվության տեսակների օրենսդրական ամրագրման վերաբերյալ: Ըստ այդմ, առանձնակի կարևորվում է, որ միջոցների տեսակները, տևողությունը և կիրառման կարգը նախատեսված լինի օրենքով: Նմանապես, օրենսդրական կարգավորում պետք է ստանա նման միջոցներ ընտրելու և կիրառելու մարմինների շրջանակը, իրավասություններն ու պարտավորությունները: Կարևոր է նաև նախատեսել մեխանիզմներ, որոնք թույլ կտան համապատասխան որոշումները բողոքարկման առարկա դարձնել:

ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված մեկ այլ Հանձնարարականով սահմանվում է նաև, որ համայնքային ծառայությունը /հանրային աշխատանքը/ պատասխանատվության միջոց է կամ հանրային սանկցիա, որը ներառում է պրոբացիայի ծառայության կողմից չվճարվող աշխատանքի կազմակերպումն ու վերահսկողությունը, ինչը կատարվում է հանրության շահերի համար՝ որպես հանցագործությամբ հասցված վնասի իրական կամ սիմվոլիկ վերականգնում: Այն չպետք է իրենում պիտակավորում պարունակի և պրոբացիայի աշխատակիցները պետք է գտնեն այն միջոցները, որով հնարավոր կլինի անձին սոցիալապես վերաինտեգրել: Համայնքային ծառայությունը կամ աշխատանքը չպետք է իրականացվի պրոբացիայի ծառայության, աշխատակիցների շահերի կամ կոմերցիոն նպատակների համար: Աշխատանքի կամ ծառայության տեսակն ընտրելիս պրոբացիայի ծառայությունը պետք է հաշվի առնի ինչպես հանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի անվտանգությունը: Համայնքային ծառայության նկատմամբ վերահսկողությունը չպետք է դիտարկվի որպես սոսկ հսկող գործառույթ, այլ որպես խորհրդատվություն տալու, օգնելու և մոտիվացնելու գործիք: Այն, ըստ անհրաժեշտության, կարող է համատեղվել վերապատրաստումների, կարողությունների զարգացման և հետագայում աշխատանք գտնելուն աջակցելու հետ[10]:

[10] Recommendation CM/Rec (2010) 1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules, 20 January 2010, https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/10/CoE-probation-rules-recommendation.pdf.

Վերոնշյալ չափորոշիչների լույսի ներքո Հայաստանի Հանրապետությունում հանրային աշխատանքների դերը գնահատելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ հիմնահարցերին: Օրենսդրական առումով հանրային աշխատանքներ պատժատեսակը բարելավել է իր դիրքը պատիժների համակարգում՝ գործող քրեական օրենսգրքում սահմանվելով որպես ինքնուրույն կիրառվող հիմնական պատիժ՝ ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որով հանրային աշխատանքները կիրառվում էին միայն որպես ազատազրկման այլընտրանք՝ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Բացի այդ, եթե քրեական նախկին օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում հանրային աշխատանքները որպես ինքնուրույն պատժատեսակ նշված չէին, ապա քրեական նոր օրենսգրքում արդեն ամրագրված են:

Ինչ վերաբերում է գործնականում հանրային աշխատանքներ պատժատեսակի դերին և դրա վերաբերյալ հասարակության ընկալումներին, ապա հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետությունում հանրային աշխատանքների ինստիտուտը դեռևս յուրացված չէ հասարակության կողմից, դրա վերաբերյալ առկա է կարծրատիպային մոտեցում, իսկ աշխատանքների կատարման վայրերը և աշխատանքների տեսակները խիստ սահմանափակ են, ինչը շահառուի մոտ չի առաջացնում պատժատեսակին համաձայնվելու շահագրգռվածություն, ինչպես նաև թույլ չի տալիս շահառուների հնարավորություններն արդյունավետորեն օգտագործել ի շահ հանրության և պետության:

Շահառուների մեծ մասն ի սկզբանե չի համաձայնվում հանրային աշխատանքների կատարմանը, կամ դրա կատարումից խուսափում է հետագայում՝ կատարման փուլում՝ հասարակության արձագանքի հանդեպ ունեցած վախից ելնելով: Օրինակ, դատավորների կարծիքով մեղադրյալը նախընտրում է ազատազրկումը, մտածելով, որ իրեն շահագործելու են, ստորացնեն, ավելը, բահը տան ձեռքը, աղբ թափել տան: Ըստ դատավորի՝ անձինք մտավախություն ունեն, թե ի՞նչ կմտածեն իրենց մասին իրենց գյուղում, ի՞նչ կասեն թաղի տղերքը, երբ, օրինակ՝ առու մաքրի, բանվորություն անի: Մեղադրյալները մտածում են, որ հանրային աշխատանքը հայ տղամարդուն հարիր չէ:

Հանրային աշխատանքի վատ կողմն այն է, որ հեռու է, բայց դժգոհ չեմ: Իմ համայքնում ես ինձ վատ կզգամ, իսկ այստեղ աշխատելն ավելի լավ է: Այստեղ թաքուն տեղ է, իմ համայնքում ես չեմ ուզել աշխատել: Այս քոլեջում էլ ծանոթ աշակերտներ կան, բայց մեռնելով, ամաչելով անում եմ: (Շահառուն աշխատում է գյուղատնտեսական քոլեջում՝ փայտ է կոտրում, փայտը տանում քոլեջ՝ վառարանում վառելու համար, հանում է վառարանի խողովակները, մաքրում, ծառ է էտում):

Պրոբացիայի շահառու

Հանրային աշխատանք կատարող անձը ընկալվում է որպես բանվոր՝ սև աշխատող: Զուտ սև աշխատանքում ներգրավելով չպետք է առաջնորդվել, այլ հակառակը, որ անձը մի բան սովորի և ուղղվի:
Պրոբացիայի ծառայության աշխատակից

Խոչընդոտները՝ մեղադրյալների և վերջիններիս շրջապատի արձագանքներն են, կամ այդ արձագանքներից վախը, «Հայկական մտածելակերպ» կոչվածը, ամոթը, վատ զգալը, որ կարող է կողքից տեսնեն ինքը քաղաք է մաքրում: Դրա փոխարեն նախընտրում են մեծ թիվ տուգանք վճարել: Իրավագիտակցության բարձրացման կարիք կա:

Փաստաբան

Դատախազության ներկայացուցչի կարծիքով՝ հանրային աշխատանքները պետք է նշանակվեն հատկապես այն գործերով, որտեղ տուժողը հասարակությունն է, պետությունը, ոչ թե մասնավոր անձը, դա առավել կծառայի պատժի նպատակին, օրինակ՝ տրանսպորտային միջոցների հետ կապված հանցանքների դեպքում: Դատավորների կարծիքով, հանրային աշխատանք պատժատեսակը արդյունավետ միջոց է, սակայն, որպեսզի ավելի արդյունավետ գործի, Պրոբացիայի ծառայությունը պետք է ուժեղանա: Պրոբացիայի ծառայության աշխատակիցների դիրքորոշումներն իրենց հերթին բաժանվում են երկու մասի. աշխատակիցների մի մասը կարծում է, որ հանրային աշխատանքը ամենաարդյունավետ պատիժներից է, քանի որ անձը համայնքին փոխհատուցում է իր կատարած հանցավոր արարքի դիմաց՝ իր աշխատանքով, և, քանի որ շահառուի համաձայնությունը պարտադիր է, դատապարտյալը դատարանից դուրս է գալիս հանրային աշխատանք կատարելուն պատրաստ, ինչն արդեն իսկ դրական է գնահատվում, մյուս մասը գտնում է, որ հաճախ հանրային աշխատանքները ձևական բնույթ են կրում և այն որպես պատիժ պետք է հեռացնել օրենսդրությունից, հանրային աշխատանքներ պատժի կազմակերպումը ռեսուրս է պետության համար, և չկա այն արդյունքը, որն ակնկալվում էր: Գործատուների կողմից ևս ստացվել են դրական և բացասական արձագանքներ. մի մասն առանձնացրել է հաջողված պատմություններ, նշելով, որ անգամ առաջարկություն են ներկայացրել շահառուին՝ վճարովի հիմունքներով աշխատանքն իրենց հիմնարկում շարունակելու համար, մյուս մասը նշել է, որ հանրային աշխատանքներից օգուտը չնչին է. գործատուի միակ օգուտը կարող էր լինել անվճար աշխատողը, սակայն, իրականում դա էլ չկա՝ միայն գաղափարն է, պրակտիկայում գործատուն օգուտ չի ստանում:

Չկա ցանկություն աշխատելու, ուղղվելու, կա ցանկություն շուտ ավարտելու հանրային աշխատանքը: Եթե զինվորական այլընտրանքային ծառայողների[11] նման նորմալ աշխատեն, կարիք ունենք, բայց արդեն ձևական է, պետությանը վնաս են տվել, չեն էլ ուղղվում:

Գործատու

Հանրային աշխատանքների արդյունավետության գնահատման առանցքային հարցերից է նաև աշխատավայրում շահառուի իրական զբաղվածությունը:

[11] Ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է և չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ:

Պարզ չէ, իսկապես անձը աշխատու՞մ է և դա օգնու՞մ է իրեն փոխվել, թե՞ ժամավաճառությամբ է զբաղվում: Շատ դեպքերում հանրային աշխատանքները ձևական բնույթ են կրում, օրինակ՝ հողագործության ոլորտում հանրային աշխատանքների կատարման վայր դատախազի այցի պահին շահառուի կոշիկի վրա անգամ փոշի չի եղել:

Դատախազ

Շահառուները հանրային աշխատանքները համարում են առավել ընդունելի պատիժ, քան տուգանքը կամ ազատազրկումը: Սակայն, ընդհանուր առմամբ, շահառուները հանրային աշխատանքները չեն ընկալում որպես պատիժ, դատվածություն, այլ մտածում են, որ տուգանք են մուծում կամ աշխատում, չկա պատժի ընկալումը:

Հանրային աշխատանքների արդյունավետությունը առավել համապարփակ գնահատելու համար անհրաժեշտ են հետադարձ ուսումնասիրություններ, վիճակագրություն, ուղղման օրինակներ, կրկնահանցագործությունների տվյալներ, որոնք, սակայն, հանրային աշխատանքներ պատժատեսակի մասով առանձին չեն վարվում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՓՈՒԼԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հանրային աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են միայն որպես հիմնական պատիժներ (պետք չէ շփոթել պատժատեսակների փոխարինման դեպքերի հետ): Շատ երկրներում, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ն, Մակեդոնիան, Սլովենիան, Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Վրաստանը, հանրային աշխատանքները հանդիսանում են այլընտրանքային պատժատեսակներ: Այդպես էր նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքով, ըստ որի՝ հանրային աշխատանքները նշանակվում էին որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ:

Հանրային աշխատանքները նշանակվում է դատարանի կողմից[12]՝ առավելապես ընդհանուր կարգով դատաքննությունների արդյունքում, սակայն քիչ չեն նաև դատաքննության հատուկ կարգի՝ համաձայնեցման կամ արագացված վարույթների կիրառման արդյունքում նշանակման դեպքերը:

Դատարանում հանրային աշխատանքներ նշանակելու վերաբերյալ միջնորդությունները հիմնականում ներկայացվում են պաշտպանական կողմի՝ մեղադրյալի կամ պաշտպանի կողմից, որոնց հանրային մեղադրողները՝ որպես կանոն, չեն առարկում: Սեփական նախաձեռնությամբ հանրային աշխատանքները որպես հիմնական պատիժ նշանակելու միջնորդություններով հանրային մեղադրողները հանդես են գալիս ոչ այնքան հաճախ, քանի որ առաջնորդվում են Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայում թվարկված պատժատեսակների

[12] Հատկանշական է, որ դատավորներից մեկն առաջարկություն է հնչեցրել «Ընդունել այնպիսի կարգավորում, ըստ որի՝ առանձին դատավորներ կլինեն, ովքեր ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության գործերը, Պրոբացիայի և շահառուի միջնորդությունները, պատժից վաղաժամկետ ազատման գործերը կքննեն: Նման ձևով և գործընթացը կարագանա և բեռնաթափում կլինի»:

հերթականությամբ, որոնցից առաջինը և նվազ խիստը հիմնականում տուգանքն է, հետո նոր՝ հանրային աշխատանքը[13]:

Ի՞նչ հանցանքների համար են նշանակվում հանրային աշխատանքները որպես պատիժ. վիճակագրություն.

Դատարանում հանրային աշխատանքները կարող են նշանակվել բացառապես ոչ մեծ[14] և միջին[15] ծանրության հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ: Գործնականում հանրային աշխատանքներն առավելապես նշանակվում են հետևյալ հանցանքների կատարման համար.

- Առողջությանը թեթև վնաս պատճառելը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 171/
- Ֆիզիկական ներգործությունը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 195/
- Կողոպուտը՝ զգալի չափերով /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 253/
- Գողությունը զգալի և խոշոր չափերով /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 254/
- Համակարգչային հափշտակությունը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 257/
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 342/
- Տրանսպորտային միջոցները հարբած (ոչ սթափ), տասնվեց տարին չլրացած կամ տվյալ տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներն անվտանգ վարելու կարողությունից զրկված անձին հանձնելը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 343/
- Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 396/
- Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը /ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 508/

---

[13] Պատժի տեսակներն են՝
1) պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը,
2) տուգանքը,
3) հանրային աշխատանքները,
4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը,
6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
7) ազատության սահմանափակումը,
8) կարճաժամկետ ազատազրկումը,
9) կարգապահական գումարտակում պահելը,
10) ազատազրկումը,
11) ցմահ ազատազրկումը:

[14] Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում քրեական օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

[15] Միջին ծանրության հանցանքներ են համարվում քրեական օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի կիրառումը Հայաստանում օրեցօր աճ է գրանցում: Եթե **2020թ.-ին, դատարանի կողմից դատավճռով անձի նկատմամբ հանրային աշխատանքները որպես հիմնական պատիժ չի նշանակվել** որևէ գործով, ապա **2021թ.-ին**՝ դատարանի կողմից դատավճռով անձի նկատմամբ հանրային աշխատանքները որպես հիմնական պատիժ են կիրառվել **2 գործով** (ծեծ), **2022թ.-ին 15 գործով** (նշված 15 գործից 5 գործը՝ գողության, 2 գործը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը, 1 գործը՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը, 4 գործը՝ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի, 1 գործը՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելը կամ շորթելը, 1 գործը՝ աշխատանքներ իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանության կանոնները խախտելը, 1 գործը՝ անտառներ ոչնչացնելը կամ վնասելը), **2023թ.-ին 78 գործով** (նշված 13 գործից 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը, 1-ը՝ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը, 6-ը՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի, 7-ը՝ ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղերը, ծառերը կամ թփերը տեղափոխելը, 14-ը՝ համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, 1-ը՝ տրանսպորտային միջոցները, ենթակառուցվածքները կամ հաղորդակցության ուղիները փչացնելը, 30-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը, 4-ը՝ գողությունը, 1-ը՝ անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը, 10-ը՝ ֆիզիկական ներգործությունը, 3-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը): **Պրոբացիայի ծառայությունում հանրային աշխատանքներ պատժատեսակով շահառուների ընդհանուր թիվը 2023 թ.-ի ընթացքում կազմել է 548**:

Ընտանեկան բռնությունների դեպքերով միջնորդվում է հանրային աշխատանքներ կատարել, քանի որ տուգանքն իր նպատակին չի ծառայի. ո՞վ է պատիժը կրելու, ընտանիքով են մարելու տուգանքի գումարը: Դրա համար սահմանվում է հանրային աշխատանք:

Դատախազ

Հատկանշական է, որ հետազոտության շրջանակներում գործատուները հենվելով գործնականում առաջացող խնդիրների վրա, նշել են, որ թմրամիջոցների շրջանառության, գողության, դանակահարության դեպքերով, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ, ինչպես նաև կրկնահանցագործությունների նկատմամբ հանրային աշխատանքների նշանակումը նպատակահարմար չէ: Որոշ դեպքերում, Պրոբացիայի ծառայությունը՝ ընդառաջելով գործատուի

խնդրանքին, դադարել է վերջինիս մոտ ուղղորդել կոնկրետ խմբի շահառուների: Սակայն, ընդհանուր առմամբ, Հայաստանում նման սահմանափակում չկա /հանրային աշխատանքներ չեն նշանակվում միայն դատավճիռ կայացնելու պահին 15 տարին չլրացած անչափահասի, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ[16]/, մինչդեռ, օրինակ՝ Խորվաթիայում հանրային աշխատանքները նշանակվում են միայն այն կրկնահանցագործների նկատմամբ, ովքեր նախկինում դատապարտվել են մինչև 6 ամիս ժամկետով ազատազրկման, կամ Սլովենիայում, մինչև երկու տարի ժամկետով ազատազրկումը կարող է փոխարինվել հանրային աշխատանքներով, բացառությամբ սեռական բնույթի հանցագործություններ կատարած լինելու դեպքերի:

Ի՞նչ հանգամանքներ է դատարանը հաշվի առնում.

Դատարանում՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները[17]՝

- Հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը
- Հանցագործության եղանակը
- Հանցագործության տեղը
- Հանցագործության ժամանակը
- Հանցագործության շարժառիթները և նպատակները
- Դիտավորության կամ անզգուշության տեսակը
- Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները
- Նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությունը:

Գործնականում հանրային աշխատանքներ պատժատեսակը նշանակելիս առավելապես հաշվի են առնվել մեղադրյալի սոցիալական և ֆինանսական վիճակը, աշխատանքի առկայությունը, առողջական վիճակը, խնամքին անչափահասների առկայությունը, տան միակ կերակրող հանդիսանալու հանգամանքը, մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, տարիքը, բնութագիրը, կրիմինոլոգիական հատկանիշները, հանցանքի բնույթը, տուժողի դիրքորոշումը, պատճառված վնասի բնույթը, չափը, դրա մարված լինելը:

Մեղադրյալի առողջական վիճակը/ հաշմանդամությունը.

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հանրային աշխատանքները նշանակելիս գնահատման ենթակա առանձին հանգամանքին՝ **մեղադրյալի առողջական վիճակին/ հաշմանդամությանը:** 2023 թ.-ի ընթացքում Պրոբացիայի ծառայությունում եղել են հանրային աշխատանքների դատապարտված չորս հաշմանդամություն ունեցող անձ (*Կոտայքի մարզում՝ 3 հաշմանդամություն ունեցող շահառու, որից 1-ը իգական սեռի ներկայացուցիչ, Շիրակի մարզում 1 հաշմանդամություն ունեցող շահառու*): Այսպես, դեռևս 18.04.2003թ.-ին ընդունված Քրեական օրենսգրքով նախատեսվում էր, որ հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված անձանց նկատմամբ: Մինչդեռ, գործող Քրեական օրենսգրքով

[16] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 60 մաս 5՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:
[17] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 69 մաս 2՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:

մոտեցումն այլ է. անձի առողջական վիճակը/հաշմանդամությունը չեն հանդիսանում հանրային աշխատանք նշանակելու արգելք, սակայն այն դեպքերում, երբ հանրային աշխատանքները նշանակելուց հետո ի հայտ է եկել այդ հանգամանքը, կամ տեղի է ունեցել դատապարտյալի առողջական վիճակի այնպիսի վատթարացում, որի պայմաններում նա զրկվել է հանրային աշխատանքների հետագա կատարման հնարավորությունից, ապա **անձն ազատվում է պատժի հետագա կրումից**: Հիվանդությունը անձի՝ պատժից ազատման հիմքերից մեկն է[18]: Սակայն, կոնկրետ հանրային աշխատանքներ պատժատեսակի դեպքում հստակեցված չէ, թե խոսքը ինչպիսի՞ հիվանդությունների և առողջական վիճակների մասին է: ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի N 825-Ն որոշմամբ[19] սահմանվում է այն ծանր հիվանդությունների (խանգարումներ, վիճակներ) ցանկը, որոնք խոչընդոտում են պատիժը կրելուն: Սակայն, հանրային աշխատանքների դատապարտված անձանց առողջական վիճակի վատթարացումը, ոչ միշտ է, որ ենթադրում է անձի մոտ ծանր հիվանդության առկայություն, ուստի այս դրույթի կիրարկումը գործնականում կարող է հանգեցնել կամայական մեկնաբանությունների:

Պրակտիկայում եղել է դեպք, երբ անձն անցել է գլխուղեղի և սրտի վիրահատություն, ապա փաստաթղթավորված ներկայացրել է դատարանին՝ պատժի հետագա կրումից ազատելու միջնորդությամբ, սակայն միջնորդությունը մերժվել է դատարանի կողմից, նույն գործով երկրորդ միջնորդությունը քննության փուլում է:

Դատախազ

Ունեցել ենք դեպք, երբ առողջական խնդիրների հիմքով հանրային աշխատանքները փոխարինվել է ազատազրկմամբ, քանի որ անձն ունեցել է առողջության հետ կապված խնդիր, սակայն չի ունեցել պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության առկայության մասին բժշկական հանձնաժողովի եզրակացություն, իսկ դատարանը պատժից ազատում է միայն այդ դեպքում:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

2023թ.-ից 2024թ.-ի ապրիլի 15-ի դրությամբ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության հանրային աշխատանքներ պատժատեսակով հաշմանդամություն ունեցող շահառուների հանրային աշխատանքների կատարման վայրեր են հանդիսացել կոմունալ ծառայությունը և կատարվել են հուշարձանների տարածքի բարեկարգման, կանաչապատման աշխատանքներ[20]: Դատապարտյալի մոտ հիվանդության, հաշմանդամության առկայության, առողջական վիճակի վատթարացման դեպքերում, Պրոբացիայի աշխատողները փոխում են դատապարտյալների աշխատանքների բնույթը՝ այն համաձայնեցնելով գործատուների հետ /բանակցում են, որպեսզի շահառուն կատարի թեթև աշխատանքներ՝ ֆիզիկական ուժի գործադրում չենթադրող՝ վարդակ փոխել, տերևներ հավաքել և այլն/:

---

[18] ՀՀ քրեակատարողական օրենսգիրք հոդված 130, մաս 1, կետ 5՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164938:
[19] ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի N 825-Ն որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=162828
[20] Պրոբացիայի ծառայության 10.05.2024թ.-ի գրությունը՝ ի պատասխան ԻՊԱՍ 18.04.2024թ.-ի հարցմանը:

Մեր շահառուն ունի անոթների հետ կապված խնդիրներ: Իրեն ավելի թեթև աշխատանքներ ենք հանձնարարում՝ երբեմն աղբն է թափում, պահակություն է անում, ճյուղեր է հավաքում:

Գործատու

Մեղադրյալի համաձայնությունը.

Դատարանում հանրային աշխատանքներ պատժատեսակի կիրառման **առանցքային հարցերից մեկը մեղադրյալի համաձայնությունն է**, որի վերաբերյալ գործնականում առկա են իրարամերժ մեկնաբանություններ:

Այսպես, մի կողմից, խոսելով առհասարակ պատժի հասկացության և նպատակների մասին, պետք է նշել, որ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ[21]: Սա ենթադրում է, որ **պատիժը նշանակվում է առանց հաշվի առնելու հանցագործություն կատարած անձի կարծիքը և կիրառվում է օբյեկտիվորեն գնահատելով կատարված արարքը:** Այլ կերպ՝ հարկադրանքն իրականացվում է սուբյեկտի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, սակայն այս դեպքում այն հետապնդում է հատուկ նպատակ՝ իրավակարգի պահպանման և ամրապնդման, գիտակցական կարգապահության արմատավորման, անձի և հասարակության բարեկեցության[22]:

Այս տեսակետի կողմնակիցներ են որոշ դատավորներ և դատախազներ: Գործնականում եղել են դատական գործեր, որոնց շրջանակներում **դատավորը հանրային աշխատանքներ պատժատեսակ է նշանակել մեղադրյալի նկատմամբ՝ առանց վերջինիս համաձայնության**, գտնելով, որ պատժի տեսակի և չափի նպատակահարմարությունը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը, հանցագործության շարժառիթները, նշանակվող պատժի՝ մեղադրյալի ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությունը և այլն: Նման գործերից է թիվ ԱՎԴ1/0045/01/23 դատական գործը[23]՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, որով անձին մեղադրանք էր առաջադրվել կենցաղային հարցերի շուրջ դստեր նկատմամբ ֆիզիկական ներգործություն գործադրելու համար/հրել, զցել է գետնին, այնուհետև 7-8 անգամ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել դստեր մարմնի տարբեր հատվածներին/:

Հանրային աշխատանքները որպես ինստիտուտ արդարացված է՝ իմպերատիվ չէ: Լսում են կողմերի կարծիքը: Սակայն կարծիքը լսելը միանշանակ չէ, որովհետև կալանքի տակ վերցնելուց անձից չեն ստանում իր համաձայնությունը:

Դատախազ

[21] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 55 մաս 1՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:
[22] Գ.Թ. Գրիգորյան, Դ.Ա. Թումասյան, ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2022թ., էջ 262:
[23] Թիվ ԱՎԴ1/0045/01/23 դատական գործը՝ https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741140550

Մյուս կողմից, կոնկրետ պատժատեսակի՝ հանրային աշխատանքների դրույթներում օրենսդիրը սահմանել է, որ հանրային աշխատանքները սահմանվում են դատապարտյալի համաձայնությամբ[24], ինչին համամիտ է ոլորտին առնչվող շահագրգիռ մարմինների մեծամասնությունը: Մի շարք երկրներում նույնպես հանրային աշխատանք սանկցիայի կիրառման համար կարևոր նախադրյալ է հանցանք կատարած անձի համաձայնությունը, որը բխում է հարկադիր աշխատանքի արգելքի սկզբունքից: Հանրային միջոցների և պատիժների ընտրությունն ու կիրառումը պետք է նպատակ հետապնդի խթանել անձի պատասխանատվության զգացողությունը: Ինչի համար նման միջոցները պետք է հնարավորինս բովանդակային և իմաստալից լինեն: Սա ենթադրում է նաև ընդունված որոշման մանրամասն բացատրություն դրա կիրառումն ապահովող մարմնի կողմից անձին հասկանալի լեզվով[25]:

Հանրային աշխատանքները, որպես ժամանակակից պատասխանատվության միջոց, էականորեն տարբերվում է հարկադիր կամ ուղղիչ աշխատանքներից, որը կիրառվում էր նախկին սոցիալիստական երկրների քրեական իրավունքում, օրինակ՝ նախկին Հարավսլավիայում[26]: *Այս պատասխանատվության միջոցի պատժողական էլեմենտը ոչ թե ինքնին աշխատանքն է, քանի որ ազատազրկված անձիք նույնպես բանտում հնարավոր է որոշակի աշխատանք տանեն, այլ ազատության սահմանափակումը, որը դրվում է անձի վրա:* Համաձայնության պահանջը լրացուցիչ ընթացակարգային պարտավորություններ է ստեղծում որոշում կայացնողների համար, ինչը, սակայն անհրաժեշտ է հանրային աշխատանքների նպատակային նշանակությանը հասնելու համար:

Կարևոր է, որ կա շահառուի համաձայնությունը: Դատապարտյալը դուրս է գալիս դատարանից պատրաստ հանրային աշխատանք կատարելու, դա արդեն դրական է գնահատվում:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Նշենք, որ **հանրային աշխատանքները նշանակվում է դատարանի կողմից, սակայն դրա կատարման վայրը որոշում է իրավասու մարմինը՝ Պրոբացիայի ծառայությունը**, որը իրականացնում է նաև պատժի վերահսկողությունը և վերասոցիալականացման աշխատանքները: Հետազոտությունը ցույց է տվել, որ դատարանները հասանելիություն չունեն անգամ գործատու կազմակերպությունների ցանկին, առաջարկվող աշխատանքների բնույթին, որի պայմաններում մեղադրյալները դատարանում պարզապես համաձայնություն են տալիս պատասխանատվության տեսակին՝ աշխատանքի բնույթի և կատարման վայրի մասին չունենալով տեղեկություն: Տեղեկատվությունը հասանելի չէ նաև պաշտպանին՝ իր վստահորդին պատժի բնույթը ճիշտ ներկայացնելու համար: Մեղադրյալները աշխատանքի վայրի և բնույթի մասին տեղեկատվությունը ստանում են միայն պատժի նշանակումից հետո՝ Պրոբացիայի ծառայությունում, և հաճախ հրաժարվում հանրային աշխատանքների կատարումից:

[24] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 60 մաս 2՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:
[25] Recommendation CM/Rec (2017) 3 on the European Rules on community sanctions and measures Council of Europe, paragraph 30.
[26] Community service as an Alternative Criminal Sanction, Darko Radulovic, Ljubliana 70/2019, available at https://www.policija.si/images/stories/Publikacije/RKK/PDF/2019/04/RKK2019-04_DarkoRadulovic_CommunityServiceAsAnAlternativeCriminalSanction.pdf.

Դատարանը պետք է ունենա հանրային աշխատանքների կատարման վայրերի/գործատուների և առաջարկվող աշխատանքների ցուցակը[27], որպեսզի մեղադրյալը դատարանում իմանա՝ համաձայնվի, թե՝ ոչ։

Դատավոր

Գտնում ենք, որ դատարանը և դատավարության կողմերը ևս պետք է հասանելիություն ունենան գործատուների և առաջարկվող աշխատանքների ցանկին։ Դատարանը ևս պետք է իրավասություն ունենա սեփական նախաձեռնությամբ որոշելու հանրային աշխատանքների կատարման վայրը և աշխատանքի բնույթը՝ հաշվի առնելով մեղադրյալի կողմից կատարված արարքի հանգամանքները, որոնք մանրամասն քննվել են դատական նիստերի ընթացքում։ Քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ դեպքում՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը նշանակում է նաև **հանրօգուտ աշխատանքներ**[28]։ Ի տարբերություն հանրային աշխատանքների[29] դատարանները պատիժը պայմանականորեն չկիրառելիս փորձաշրջան սահմանելով, **դատավճռով սահմանում են նաև հանրօգուտ աշխատանքների կոնկրետ բնույթը։**

Օրինակ՝ թիվ ԼԴ1/0025/01/21 դատական գործով[30] անձին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա անտառամասում՝ առանց համապատասխան թույտվության, իրեն պատկանող բենզաղոցով միայնակ ապօրինի հատել է 10 հատ բոխի, 1 հատ ուռենի և 1 հատ թխկի տեսակի ընդհանուր թվով 12 հատ ծառեր, որոնք ձիու և սայլակի միջոցով տեղափոխել է իր տան բակ, ապա օգտագործել որպես վառելափայտ՝ այդ կերպ բուսական աշխարհին պատճառելով խոշոր չափերի վնաս։ Նշված գործով դատարանը վճռել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ ինչպես նաև ներգրավվել հանրօգուտ աշխատանքներում՝ տնկելով թվով 50 ծառ /տնկիներ/։

Բացի այդ, նշվածը կարող է հիմնավորվել նաև Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգի[31] 42րդ կետով այն մասին, որ «**Հանրային աշխատանքների կատարման վայրը ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում** հաշվի են առնվում հանրային աշխատանքների կատարման վայրի և պրոբացիայի շահառուի հաշվառման վայրի միևնույն համայնքի կամ Երևան քաղաքում վարչական շրջանի շրջանակում տեղակայված լինելու հանգամանքը (…)։ Այսինքն, Կառավարությունը ևս հանրային աշխատանքների կատարման վայրի ընտրության հնարավորությունը չի դիտարկել որպես բացառապես Պրոբացիայի ծառայության ստորաբաժանման իրավասություն։

[27] Օրինակ, մասնակիորեն հրապարակային հասանելի են Պրոբացիայում իրականացվող վերասոցիալականացման ծրագրերը՝ https://probation.am/hy/verasocialakanacman-cragrer-yerevan.
[28] ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 84, մաս 5 կետ 5՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397։
[29] ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 60՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397։
[30] Թիվ ԼԴ1/0025/01/21 դատական գործը՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438327300։
[31] ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի N 452-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=176045։

Հանրային աշխատանքների տևողությունը.

Ինչ վերաբերում է հանրային աշխատանքների տևողությանը, տարբեր երկրներում հանրային աշխատանքների տևողությունը հաշվարկվում է տարբեր եղանակներով՝ ժամերով, օրերով, ամիսներով. Բոսնիա և Հերցեգովինայի ֆեդերացիայում հանրային աշխատանքի տևողությունը պետք է լինի նվազագույնը 10, առավելագույնը 90 աշխատանքային օր, և կիրառման ժամանակահատվածը պետք է լինի մեկ ամսից մեկ տարի միջակայքում: Բոսնիա և Հերցեգովիանայի Սպրսկա շրջանի օրենսդրությամբ հանրային աշխատանքները նախատեսվում է ոչ թե օրերով, այլ ժամերով, այն չի կարող լինել 60 ժամից պակաս և 360 ժամից ավելի, և որը չի կարող մի ամսից պակաս և 6 ամսից ավել ժամանակահատվածում լինել: Ընդ որում, մեկ ամսվա ընթացքում իրականացվող հանրային աշխատանքը չի կարող 60 ժամից ավելին լինել[32]: Խորվաթիայում հանրային աշխատանքների տևողությունը որոշվում է ժամերով: Դատարանը կարող է հանրային աշխատանքով փոխարինել մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկումը կամ տուգանքը, որը բաշխվում է 360 օրվա մեջ: Ազատազրկումը դատարանի կողմից հանրային աշխատանքով փոխարինելու դեպքում ազատազրկման մեկ օրը հաշվարկվում է որպես երկու ժամ հանրային աշխատանք: Հանրային աշխատանքների կատարման ժամկետը չի կարող մեկ ամսից պակաս կամ երկու տարուց ավելին լինել՝ հաշվարկված այն պահից, երբ որոշումը ուժի մեջ է մտել[33]: Մակեդոնիայում հանրային աշխատանքը նշանակվում է 40-ից 240 ժամ տևողությամբ, առանց փոխհատուցման: Կարող է կատարվել նաև տոնական օրերին, ոչ աշխատանքային օրերին, սակայն շաբաթական ոչ պակաս քան 5 ժամ՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում: Ազատազրկման մեկ օրը կամ տուգանքի 20 եվրոն հնարավոր է փոխարինել 3 ժամ հանրային աշխատանքով, ինչը սակայն չի կարող գերազանցել 240 ժամը[34]: Սլովենիայում մինչև երկու տարի ժամկետով ազատազրկումը, բացառությամբ սեռական բնույթի հանցագործությունների, կարող է փոխարինվել հանրային բնույթի ծառայությամբ/աշխատանքով, որը չի կարող 80 ժամից պակաս և 480 ժամից ավելին լինել: Վերջինս որոշվում է այնպես, որ ազատազրկման մեկ օրը փոխարինվի 2 ժամ աշխատանքով: Տուգանքը, որը հավասար է 360 օրական մարման կարող է փոխարինվել մինչև մեկ տարվա անվճար աշխատանքով: Աշխատանքը որոշվում է այնպես, որ օրական մարումը հավասար լինի մեկ ժամ հանրային աշխատանքի[35]: **Շվեցարիայում** մինչև 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժը հնարավոր է փոխարինել հանրային աշխատանքով, տուգանքով կամ դրամական տույժով, ազատազրկման մեկ

---

[32] Babić, M., & Marković, I. (2018). Alternativne krivične sankcije i krivično zakonodavstvo u BiH (način zakonodavnog regulisanja i iskustva. u primjeni) [Alternative criminal sanctions and criminal law in BiH]. In Alternativne krivične sankcije (regionalna krivična zakonodavstva, iskustva u primeni i mere unapređenja) [Alternative criminal sanctions (Regional criminal law, experience in implementation and improvement measures] (pp. 201–217). Belgrade: Mission OSCE in Serbia.

[33] Croatian criminal Code, article 45,
National Statistics Office, taken from Derenčinović et al., 2018: https://dzs.gov.hr/en.

[34] Kambovski, V. (2015). Naučen i praktičen komentar na Krivičniot Zakonik na Republika Makedonija [Scientific and practical commentary on the Criminal Code of the Republic of Macedonia]. Skopje: Praven fakultet,
Kambovski, V. (2018). Alternativne mere u makedonskom krivičnom pravu i problem njihove primene [Alternative measures in Macedonian criminal law and the problem of their implementation]. In Alternativne krivične sankcije (regionalna krivična zakonodavstva, iskustva u primeni i mere unapređenja) [Alternative criminal sanctions (Regional criminal law, experience in implementation and improvement measures] (pp. 131–149). Belgrade: Mission OSCE in Serbia.

[35] Criminal Code of Slovenia, article 107, 1994. Šelih, A. (2006). Alternativne sankcije i mere u krivičnopravnom sistemu Slovenije [Alternative sanctions and measures in the criminal justice system of Slovenia]. Temida, 1
Meško, G., Hacin, R., Žiberna, P., & Mihelj Plesničar, M. (2016). Izvajanje dela v korist skupnosti – kvalitativna študija v Ljubljanski regiji [Implementation of community service – A qualitative study in the Ljubljana region]. Revija za kriminalistiko in kriminologijo, 67(3):

օրը հավասարազոր է 4 ժամ հանրային աշխատանքի: Վրաստանում հանրային աշխատանքները կատարվում են 40-ից 800 ժամ տևողությամբ, իսկ օրական տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը[36]:

Հայաստանում հանրային աշխատանքների նշանակման դեպքերի աճի խթան հանդիսացավ դրա հանրային աշխատանքների տևողության/ ժամաքանակի կրճատումը: 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքով հանրային աշխատանքները դատապարտյալի համաձայնությամբ սահմանվում են ոչ ավելի, քան օրական 4 ժամ տևողությամբ՝ ընդհանուր **60-270 ժամ տևողությամբ:** Քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում այն կարող է անգամ պակաս լինել 60 ժամից: Նախկին՝ 2003թ.-ի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքով հանրային աշխատանքների տևողությունն անհամեմատ ավելի մեծ էր, սահմանված էր՝ **270-2200 ժամ տևողությամբ**, ինչն ուղղակիորեն անդրադառնում էր շահառուների կողմից հանրային աշխատանքների կատարման շահագրգռվածության և Պրոբացիայի ծառայության կողմից պատշաճ վերահսկողության վրա: Նշենք, որ նախկին Քրեական օրենսգրքի գործողության ժամանակ նշանակված պատիժները և դրանց չափը՝ դատախազության կամ շահառուների միջնորդությունների հիման վրա՝ դատարանի կողմից համապատասխանեցվել են նոր Քրեական օրենսգրքին, որի արդյունքում շատերն ազատվել են պատժից՝ պատիժն ամբողջությամբ կրելու հիմքով: Հայաստանի Հանրապետությունում հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով: Սակայն, պատիժները փոխարինելիս կամ գումարելիս, ինչպես նաև պատիժը հաշվակցելիս ժամկետները կարող են հաշվարկվել օրերով:

Հանրային աշխատանքի տևողության կրճատումը դրական է գնահատվում հատկապես Պրոբացիայի ծառայության աշխատակիցների կողմից՝ ռեսուրսների անբավարարության և արդյունավետ վերահսկողության նկատառումներից ելնելով /նախկինում հանրային աշխատանքը կարող էր տևել 1,5 տարուց ավելի, ներկայումս՝ մոտ 2 ամիս/: Մյուս կողմից, դատարանը և դատախազությունը բացասական են գնահատում հանրային աշխատանքների ժամաքանակի կրճատումը, քանի որ այն բավարար չէ շահառուին փոխելու համար, ինչպես նաև արդար և համաչափ չէ հատկապես բարձր տուգանքի փոխարինման դեպքերում:

Հետազոտությամբ վեր են հանվել շահառուների կողմից հանրային աշխատանքների կատարման տարբեր ժամային գրաֆիկներ՝ օրական 2, 3 և 4 ժամ տևողությամբ: Շահառուներն աշխատանքը կատարել են հիմնականում հետևյալ գրաֆիկներով՝ 9:00-ից 13:00-ն, 11:00-ից 15:00-ն, 13:00-ից 17:00-ն և այլն:

Հանրային աշխատանքի ընդհանուր տևողությունից զատ, մյուս մտահոգությունը կապված է դրա օրական առավելագույն ժամաքանակի հետ: Ներկայումս **հանրային աշխատանքների օրական տևողությունը չի կարող գերազանցել 4 ժամը:** Հետազոտության շրջանակներում գրեթե բոլոր շահառուները ցանկություն են հայտնել փոխելու/ավելացնելու ժամաքանակը՝ սահմանելով օրական մինչև 8 ժամ՝ Աշխատանքային օրենսգրքին համապատասխան[37], հնարավորություն տալով շահառուին՝ ըստ ցանկության, պետության հանդեպ պարտավորությունները կատարել ավելի վաղ ժամկետում: Սակայն, գործատուները նշում են, որ չեն կարող ապահովել օրական 8 ժամվա համար

[36] Switzerland Federal Statistical Office, Community service, electronic monitoring and probation assistance, https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/crime-criminal-justice/execution-penal-sentences-justice/employment-labour-electronic-home-detention-supervision.html:

[37] Հանրային աշխատանքների աշխատաժամանակը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամանակի ռեժիմը և տևողությունը:

նախատեսված աշխատանք: Դատավորի խոսքով՝ կան անձինք, որոնք հիմնական աշխատավայրից արձակուրդ են վերցնում հանրային աշխատանքները կատարելու և աշխատանքի վերադառնալու նպատակով, ուստի նման դեպքերում անձանց պետք է հնարավորություն ընձեռնվի աշխատել օրական 4 ժամից ավելի: Օրական 4 ժամ տևողությամբ սահմանափակումը կարող է ազդել շահառուի աշխատանքային հարցերի, ինչպես նաև աշխատանք գտնելու վրա: Այս կարծիքին է նաև դատախազությունը, որը հիմնական աշխատանք ունեցող մեղադրյալների դեպքում, խուսափում է դատարանում որպես պատիժ պահանջել հանրային աշխատանքները, փոխարենը պահանջում է տուգանք՝ անձին աշխատանքից չկտրելու նպատակով:

Հանրային աշխատանքների կատարումը դատապարտյալի աշխատանքից ազատ ժամանակահատվածում.

Հայաստանի Հանրապետությունում հանրային աշխատանքները կատարվում են դատապարտյալի ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում: Հետազոտությամբ, այն շահառուները, որոնք հանրային աշխատանքներին զուգահեռ ունեցել են հիմնական աշխատանք, առավելապես հանդիսացել են ինքնազբաղված անձինք՝ զբաղվել անասնապահությամբ, հողագործությամբ, իսկ շահառուների մյուս մասը հիմնական վճարովի աշխատանք չի ունեցել՝ հանրային աշխատանքների ժամային գրաֆիկով կամ այլ անձնական հանգամանքներով պայմանավորված: Եղել են դեպքեր, երբ անձինք հիմնական վճարովի աշխատանք են կատարել միայն շաբաթ և կիրակի օրերին: Ըստ պրոբացիայի ծառայության՝ շահառուները հաճախ հանդիսացել են չգրանցված աշխատողներ, ուստի փաստաթղթային առումով հնարավոր չի եղել հիմնավորել հիմնական աշխատանք ունենալու հանգամանքը, շատ շահառուներ էլ խնդրել են իրենց աշխատանքի վայր հարցում չուղարկել, քանի որ նրանց կհեռացնեն աշխատանքից:

Խնդիր է նաև այն, որ երբեմն շահառուները ցանկացել են ներգրավվել հանրային աշխատանքների շաբաթ օրերին /կան Պրոբացիայի ծառայության հետ համագործակցող համատիրություններ, որոնք աշխատում են շաբաթ օրերին/, սակայն հանգստյան օրերին չի աշխատում Պրոբացիայի ծառայությունը, հետևաբար հնարավոր չի լինում կազմակերպել շահառուների աշխատանքը աշխատանքային ժամերից կամ օրերից դուրս:

Էլեկտրոնային հսկողություն.

2023 թ.-ի հունվարի 1-ից Պրոբացիայի ծառայությունն իրականացնում է նաև էլեկտրոնային հսկողություն[38], մասնավորապես՝ տնային կալանք, վարչական հսկողություն խափանման միջոցները, ազատության սահմանափակում պատիժը, ինչպես նաև որոշակի վայրեր այցելելու արգելք անվտանգության միջոցը կատարելու նպատակով: Սակայն, էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման[39] հնարավորություն է նախատեսված նաև հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման փուլում՝ որպես պատժի կատարման հետ համակցված հսկողության միջոց[40]: Պատժի կատարման փուլում էլեկտրոնային հսկողությունը կիրառվում է դատական ակտով՝

[38] Պրոբացիայի ծառայության մասին ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը՝ http://parliament.am/draft_docs8/K-673_Himnavorum.pdf, ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի N 452-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=176045:

[39] Պրոբացիայի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164938

[40] Պրոբացիայի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=187978

Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ: Դատական ակտով է որոշվում նաև էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորման հարցը՝ պետական բյուջեի կամ պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին: Օրինակ՝ տնային կալանք խափանման միջոցի դեպքում էլեկտրոնային հսկողության ռադիոալիքային սարքավորումների կիրառման դեպքում՝ պրոբացիայի մեկ շահառուի հաշվով օրական վճարը կազմում է՝ 1331 ՀՀ դրամ, իսկ վարչական հսկողություն խափանման միջոցի դեպքում էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների կիրառման դեպքում՝ պրոբացիայի մեկ շահառուի հաշվով օրական վճարը կազմում է՝ 1438 ՀՀ դրամ[41]: Պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին էլեկտրոնային հսկողություն նշանակելու դեպքում, շահառուն պետք է Պրոբացիայի ծառայության դեպոզիտ հաշվին մուտքագրի էլեկտրոնային հսկողության միջոցների երկամսյա կիրառման երաշխիքային գումար[42]: **Երկամսյա կիրառման երաշխիքային գումարի փոխանցման նախապայմանը խնդրահարույց է հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման պարագայում, քանզի** հանրային աշխատանքների տևողությունը 60-ից 270 ժամ է, որոշ դեպքերում կարող է պակաս լինել 60 ժամից, իսկ օրական աշխատաժամանակի առավելագույն տևողությունը 4 ժամ է, այսինքն՝ **հանրային աշխատանքների տևողությունը կարող է լինել անգամ 15 օրից պակաս:** Բացի այդ, նշենք, որ շահառուի մոտ բավարար դրամական միջոցների բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ էլեկտրոնային հսկողության կիրառումը մերժելու համար. այս դեպքում հսկողությունը պետք է կատարվի պետական բյուջեի հաշվին:

Գործնականում հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման փուլում էլեկտրոնային հսկողություն չի իրականացվում: Այն ոլորտային կառույցների կողմից գնահատվում է որպես հսկողության արդյունավետ միջոց՝ ժամանակի և ֆինանսների ճիշտ կառավարման տեսանկյունից: Միաժամանակ, հնարավոր է լինելու հսկել բացառապես շահառուի գտնվելու վայրը, տեղաշարժը, իսկ վերջինիս կատարած աշխատանքի որակը բովանդակային առումով ստուգելն անհնար է: Որպես հնարավոր լուծում առաջարկվում է էլեկտրոնային հսկողությունն իրականացնել տեսախցիկների գործարկմամբ՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի և երրորդ անձանց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը և լավագույն շահերի հավասարակշռությունը:

Հանրային աշխատանքների կատարման փուլում էլեկտրոնային հսկողության վերաբերյալ դատական ակտ չի եղել, քանի որ նման միջնորդություն էլ չի եղել:

Դատավոր

Պրոբացիայի ծառայությունը ներկայումս հանրային աշխատանքներ պատիժն էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ չի իրականացնում, քանի որ չի սահմանվել դատական ակտով: Հետագայում, դատարանների կողմից էլեկտրոնային հսկողության կիրառումը նշանակելու դեպքում, նախատեսվում է հանրային աշխատանքների կատարումն իրականացնել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ:

---

[41] ՀՀ ԱՆ Պրոբացիան ծառայություն, էլեկտրոնային հսկողության ծառայություններ, https://probation.am/hy/elektronayin-hskoghutyan-tsarayutyunner

[42] Պրոբացիայի մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=187978

Տուգանքի փոխարինումը հանրային աշխատանքներով.

Հանրային աշխատանքները որպես հիմնական պատիժ նշանակվելուց բացի, կարող են նշանակվել նաև այն դեպքերում, երբ անձը նյութական վիճակի վատթարացման հետևանքով զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից: Սակայն, առանցքային հարցը տուգանքը չվճարելու պատճառների պարզումն է:

Եթե անձը խուսափել է տուգանքը վճարելուց, ապա տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինել հնարավոր չէ: Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, իսկ եթե այդպիսի գույք առկա չէ, ապա տուգանքը փոխարինվում է ազատազրկմամբ՝ ազատազրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց: Տուգանքը վճարելուց խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը տուգանքի մասին պրոբացիայի ծառայության կողմից պատշաճ ծանուցվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տուգանքի վճարման անդորրագիրը չի ներկայացրել լիազոր մարմին կամ խախտել է տուգանքի վճարումը հետաձգելու կամ տուգանքը մաս առ մաս վճարելու կարգն ու պայմանները, բացառությամբ այն դեպքերի, երբ նման արարքները պայմանավորված են եղել անձի նյութական վիճակի վատթարացմամբ:

Սակայն այլ է իրավիճակը, երբ անձը ոչ թե խուսափել է տուգանքը վճարելուց, այլ տուգանքը նշանակելուց հետո նյութական վիճակի վատթարացման հետևանքով զրկվել է տուգանքը վճարելու հնարավորությունից: Այս դեպքում, **դատարանը, հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը՝ նշանակում է հանրային աշխատանքներ՝ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկելով հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով**[44]**:** Ընդ որում, նախկին Քրեական օրենսգրքի իրավակարգավորումներով, տուգանք պատժատեսակը վճարելու անհնարինության դեպքում այն փոխարինվում էր հանրային աշխատանքներով Պրոբացիայի ծառայության կողմից դատարան ներկայացված միջնորդությամբ, սակայն ըստ գործող Քրեական օրենսգրքի՝ հանրային աշխատանքները նշանակվում են մեղադրյալի միջնորդությամբ՝ իր համաձայնության պայմաններում:

Հաշվարկի օրինակ. եթե անձի նկատմամբ նշանակվել է տուգանք 750,000 ՀՀ դրամի չափով, ապա չվճարված գումարը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքում, 750,000 ՀՀ դրամը անհրաժեշտ է բաժանել նվազագույն աշխատավարձի չափին՝ 75,000 ՀՀ դրամին, ապա ստացված ցուցիչը (մեր օրինակում՝ 10) բազմապատկել 24 ժամով : Արդյունքում՝ մեր օրինակում ստացվեց 240 ժամ:

[43] Պրոբացիայի ծառայության 12.01.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 10.11.2023թ.-ի հարցմանը:

[44] Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված է 75000 դրամ, տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172160:

2023թ.-ին Պրոբացիայի շահառուների նյութական վիճակի վատթարացման հետևանքով նշանակված տուգանքը վճարելու հնարավորությունից զրկվելու դեպքում՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ դատարան տրված դիմումների քանակը եղել է 35, որից բավարարվել է 16-ը[45]:

Պրակտիկայում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերը հիմնականում պայմանավորված են շահառուների անվճարունակ լինելու հանգամանքով: Հետազոտության շրջանակներում դատավորներից մեկը հաշվի առնելով տուգանքի հետ կապված խնդիրները, առաջարկել է տուգանքը վճարելու նպատակով ստեղծել կառույցներ կամ համագործակցել տարբեր ընկերությունների հետ, որտեղ կաշխատեն շահառուները՝ աշխատավարձի մի մասը փոխանցելով որպես տուգանքի մարում:

Տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում մեղադրյալների ֆինանսական վիճակը: Այդ վիճակում գտնվող անձանց նկատմամբ տուգանք սահմանելն անիմաստ է, գալիս են Պրոբացիայի ծառայություն, ապա փոխարինում հանրային աշխատանքներով: Օրինակ՝ մեկ անձի նկատմամբ նշանակվել էր տուգանք 450,000 ՀՀ դրամի չափով, այն պայմաններում, երբ անձը բնակվել է տնակում և ստացել 30,000 ՀՀ դրամ կենսաթոշակ:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Կարևոր է անդրադառնալ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2023թ.-ի հունիսի 30-ի նոր նախադեպային որոշմանը՝ թիվ ՍԴ/0006/13/22 գործով[46], որով տուգանքը վճարելու անհնարինության դեպքում նախատեսվել է գույքի բռնագանձման հնարավորություն: Այսինքն՝ բռնագանձման անհնարինության դեպքում միայն հնարավոր կլինի անցնել հանրային աշխատանքներ նշանակելու հարցին: Նախկինում, պրակտիկայում գտնում էին, որ բռնագանձման հարցը անձի վիճակը վատթարացնող է, սակայն վճռաբեկ դատարանը մեկնաբանել է այլ կերպ: Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ բռնագանձման պարագայում պատժատեսակի փոփոխություն, որպես այդպիսին, տեղի չի ունենում: Այլ կերպ՝ նախքան չվճարված տուգանքն ավելի խիստ պատժատեսակով փոխարինելը, օրենսդրորեն նախատեսվել է միջանկյալ հնարավորություն՝ տուգանքի կատարումն ապահովող ինքնուրույն գործիք, որը թույլ է տալիս հասնելու դատարանի դատավճռով նշանակված պատժի կատարմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարված փոփոխությունն ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է, քանի որ թույլ է տալիս տուգանքն անմիջապես չփոխարինել ավելի խիստ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով, հետևաբար օրենսդրական նշված փոփոխությանը պետք է նաև հետադարձ ուժ տրվի:

[45] Պրոբացիայի ծառայության 12.01.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 10.11.2023թ.-ի հարցմանը:
[46] Թիվ ՍԴ/0006/13/22 գործը՝ https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2086:

Հանրային աշխատանքների փոխարինումն ազատազրկմամբ.

Հանրային աշխատանքների դատապարտված շահառուն, ով պատժի կատարման 1 ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների 90 տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի, կամ հանրային աշխատանքների կատարման ժամանակ 1 ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ կոպտորեն խախտել է աշխատանքային կարգապահության կանոնները, կամ ծանուցվելու դեպքում երկու և ավելի անգամ անընդմեջ կամ օրենքով նախատեսված դեպքում չի ներկայացել տարածքային մարմին, կամ հրաժարվել է հանրային աշխատանքներ կատարելուց, համարվում է հանրային աշխատանքները կատարելուց խուսափող անձ:

Հանրային աշխատանքների կատարման կարգն ու պայմանները խախտելու դեպքում պրոբացիայի ծառայողը եռօրյա ժամկետում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում է Պրոբացիայի ծառայություն, պարզում է կատարված խախտման պատճառը՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով համապատասխան փաստաթղթեր, որի կապակցությամբ կազմում է արձանագրություն: Հարգելի պատճառների բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողը դատապարտյալին գրավոր նախազգուշացնում է օրենքով սահմանված պատասխանատվության մասին: Իսկ հանրային աշխատանքներից խուսափելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ: **Հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ հանրային աշխատանքների 8 ժամը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց:** Օրինակ՝ 200 ժամ հանրային աշխատանքները փոխարինվում են 25 օր ազատազրկմամբ:

2023թ.-ին Պրոբացիայի շահառուի կողմից հանրային աշխատանքները կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում՝ պրոբացիայի ծառայության կողմից դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներ պատիժն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների քանակը եղել է 51, որից բավարարվել է 10 միջնորդություն[47]:

Անդրադառնանք հանրային աշխատանքներից խուսափելու դեպքում այն ազատազրկմամբ փոխարինելու գործընթացի հնարավոր խոչընդոտներին: Այսպես, այն դեպքերում, երբ Քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է՝ **ազատազրկում նախատեսված չէ, ապա սահմանվող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:** Այդպիսի հանցագործություններից են՝ վտանգի մեջ թողնելը, հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ներգործությունը, ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելը, սեռավարակով անզգուշությամբ վարակելը և այլն:

Սակայն, այլ է իրավիճակը, երբ ոչ մեծ ծանրության հանցագործությունը մեղադրյալի կողմից կատարվել է առաջին անգամ: Նման պայմաններում, տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ մեղադրյալի համաձայնության բացակայության դեպքում կամ որպես հիմնական պատիժ նշանակված հանրային աշխատանքների կատարումից խուսափելու դեպքում, տուգանքը կամ հանրային աշխատանքը չեն կարող փոխարինվել ազատազրկմամբ: Քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածը սահմանում է, որ **առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն**

[47] Պրոբացիայի ծառայության 12.01.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 10.11.2023թ.-ի հարցմանը:

կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման: Այսինքն, անձը չի կարող դատապարտվել ազատազրկման առաջին անգամ այնպիսի հանցանքների կատարման համար, ինչպիսիք են՝ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը, անզգուշությամբ միջին ծանրության վնաս պատճառելը, խտրականությունը, բժշկական գաղտնիքը հրապարակելը, անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը և այլն:

Թիվ ԱՐԴ/0029/13/23 գործով, Պրոբացիայի ծառայությունը միջնորդություն էր ներկայացրել առաջին անգամ հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված տուգանքը ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ, քանի որ անձը հրաժարվել էր հանրային աշխատանքների կատարումից: Միջնորդությունը մերժվել է, քանի որ անձն առաջին անգամ է կատարել ոչ մեծ ծանրության հանցագործություն, ուստի տվյալ դեպքում ազատազրկում չի կարող նշանակվել: Որոշումը կայացրել եմ ելնելով մարդու իրավունքների տրամաբանությունից, անձի վիճակը վատթարացնող դրույթներից: Կարևոր չէ դատավճռի արդյունքում, թե՝ միջնորդության բավարարման արդյունքում, ես անձին զրկում ազատությունից, խոսքը նույն իրավունքի խախտման մասին է: Սակայն վերաքննիչ քրեական դատարանը բեկանել է այս որոշումը:

Դատավոր

Այսպես, մի կողմից Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 60-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերը սահմանում են, որ հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ, մյուս կողմից՝ Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 67-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման: Այս իրավակարգավորումները գործնականում հանգեցնում են տարաբնույթ մեկնաբանությունների, ուստի գտնում ենք, որ Քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերի և 67-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից[48] **պաշտոնական պարզաբանման կարիք կա[49]: Հարցի վերաբերյալ կարիք կա նաև Վճռաբեկ դատարանի մեկնաբանության/որոշման:** Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է՝ դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում: Պատշաճ դիմելու և պաշտոնական պարզաբանում չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է նորմատիվ իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվելու իր ներկայացրած պարզաբանման տարբերակով:

Քրեական օրենսգրքում որպես ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է սահմանված նաև կարճաժամկետ ազատազրկումը: Կան հոդվածներ, որոնք չեն նախատեսում ազատազրկում, սակայն նախատեսում են կարճաժամկետ ազատազրկում (*օրինակ՝ ֆիզիկական ներգործության, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելու վերաբերյալ հոդվածները*): Հանրային աշխատանքներից

---

[48] ՀՀ կառավարության 9 հուլիսի 2020 թվականի N 1159-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144335:

[49] Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, հոդված 42, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187324:

խուսափելու դեպքում Պրոբացիայի ծառայությունը, դատախազը դատարան են դիմում նաև հանրային աշխատանքները կարճաժամկետ ազատազրկմամբ փոխարինելու միջնորդությամբ, սակայն այն բոլոր դեպքերում չէ, որ կիրառելի է: **Կարճաժամկետ ազատազրկումը կարող է նշանակվել միայն նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ**: Դատախազները չունենալով այլընտրանք, երբեմն հանրային աշխատանքներից խուսափող անձի նկատմամբ միջնորդում են նշանակել ազատության սահմանափակում պատժատեսակը /որոշակի վայրեր այցելելու արգելքը/, ինչը համաչափ և արդարացի պատիժ չէ կատարված հանցանքների համար, օրինակ՝ ընտանեկան բռնությունների դեպքերով:

Ստացվում է իրավիճակ, որ դատապարտյալի նկատմամբ կիրառված հանրային աշխատանքները չարամտորեն չկատարելու դեպքում անձը մնում է անպատիժ: Մինչդեռ, հանրային աշխատանքներ պատժատեսակը կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում դատապարտյալի նկատմամբ կարող է նաև քրեական հետապնդում հարուցվել դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածին համապատասխան:

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը՝ ազատազրկման փոխարինումը հանրային աշխատանքներով.

Հանրային աշխատանքների նշանակումը հնարավոր է նաև պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու դեպքերում: Դատավճռով նշանակված պատիժների կատարումն անխուսափելիորեն ներգործում է դատապարտյալի գիտակցության, կամքի, վարքի, սոցիալական միկրոմիջավայրի ու շփումների, ինչպես նաև հոգեբանության վրա: Նշված ազդեցությունը դատապարտյալի մոտ կարող է առաջացնել ոչ միայն բացասական, այլև դրական փոփոխություններ: Այս առումով պատժատեսակների փոխարինելու ինստիտուտը կարող է հանդիսանալ խթանիչ գործոն, որն իրական հնարավորություն է ստեղծում պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով, եթե առավել խիստ պատիժն իրականացնելն այլևս նպատակահարմար չէ[50]: Դատարանը նշանակված հիմնական կամ լրացուցիչ պատիժը կամ դրա չկրած մասը փոխարինում է ավելի մեղմ պատժով[51], եթե դատավճիռը կայացնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով նշանակված պատժատեսակի կատարումն օբյեկտիվորեն անհնարին է դարձել /օրինակ՝ գույքային վիճակի վատթարացում, առողջական վիճակ/:

2023թ.-ին դատարանի կողմից ազատազրկման ձևով պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերի քանակը կազմել է 8[52]:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

[50] Գ.Թ. Գրիգորյան, Դ.Ա. Թումասյան, ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2022թ., էջ 377:
[51] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 88՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:
[52] Պրոբացիայի ծառայության 12.01.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 10.11.2023թ.-ի հարցմանը:

Ռիսկերի և կարիքների գնահատում.

Հանրային աշխատանքների իրականացման արդյունավետության երաշխավորման կարևոր նախապայմաններից է շահառուի ռիսկերի և կարիքների գնահատումը: Այն վեր է հանում պրոբացիայի շահառուի կողմից կատարված արարքի պատճառները և թույլ է տալիս պլանավորել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան նվազեցնել կատարված հանցագործության կրկնության հավանականությունը:

Պրոբացիայի ծառայությունը յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր է կազմում՝ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները[53]: Պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման նպատակով դեռևս 2021թ.-ի հունիսի 28-ին ՀՀ արդարադատության նախարարի կողմից ընդունվել է «Պրոբացիայի ծառայության չափահաս և անչափահաս շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքների հաստատման և փորձարկման մասին» N 272-Լ հրամանը[54]:

Չնայած ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները նախատեսված են յուրաքանչյուր շահառուի համար, սակայն, օրենսդրական մակարդակում և գործնականում դրանք կիրառվում են միայն պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ[55]: Իսկ որպես հիմնական պատիժ հանրային աշխատանքների դատապարտված շահառուների նկատմամբ, ինչպես նաև տուգանքի վճարման անհնարինության դեպքում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու և պատիժն ավելի մեղմ պատժով՝ ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում՝ շահառուների նկատմամբ ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը չի կիրառվում և, որպես կանոն, այդ փուլը բաց է թողնվում: Հաշվառումից հետո Պրոբացիայի ծառայությունը պարզապես կազմում է վերահսկողության պլան: Մինչդեռ, հանրային աշխատանքների դատապարտված անձանց նկատմամբ ևս պետք է իրականացվի ռիսկերի և կարիքների գնահատում՝ այդ նպատակով մշակված համապատասխան գործիքի միջոցով, որը կներառի շահառուների գենդերային, առողջական, տարիքային, կրթական, մասնագիտական և այլ առանձնահատկությունները:

Ռիսկերի գնահատում չկա, քանի որ հանրային աշխատանքներ պատիժը կարճաժամկետ է:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Թող Պրոբացիայի ծառայությունը շահառուի ռիսկերը գնահատի, նոր ուղարկի: Պոտենցիալ հանցագործին, որը չի փոխվելու՝ թող չուղարկեն: Կան վայրեր, որտեղ իրենց կարիքը գուցե լինի, օրինակ՝ ՔԿՀ-ները, այնտեղ կարող են ծառերը էտել:

Գործատու

---

[53] ՀՀ Պրոբացիայի մասին ՀՀ օրենք հոդված 28, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187978:
[54] ՀՀ Արդարադատության նախարարի թիվ 272-Լ հրաման, https://probation.am/en/node/739:
[55] ՀՀ Պրոբացիայի մասին ՀՀ օրենք, հոդված 24, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187978:

Վերասոցիալականացման միջոցառումներ.

Հանրային աշխատանքներ իրականացնող շահառուին պետք է հնարավորություն ընձեռել մասնակցելու նաև վերասոցիալականացման միջոցառումներին: Նշենք, որ վերասոցիալականացման միջոցառումների շրջանակներում, դեռևս 2022թ.-ի նոյեմբերին Արարատ գյուղում Պրոբացիայի ծառայությունը բացել էր առաջին մասնագիտական ուսուցման կենտրոնը, որում իրականացվում են՝ կահույքի պատրաստման, կարի հիմունքների, կոսմետոլոգիայի և վարսահարդարման հմտությունների դասընթացներ: Հետազոտության շրջանակներում շահագրգիռ անձանց կողմից առաջարկություն է հնչեցվել նմանատիպ կենտրոնները հիմնել կամ կենտրոնը տեղափոխել ավելի մեծ բնակավայր, օրինակ՝ Երևան՝ շահառուներին թիրախավորումներից պաշտպանելու նպատակով. Արարատի մարզում նման կենտրոն ունենալը՝ համապատասխան ցուցատախտակով ավելի է թիրախավորում մուտք ու ելք անող շահառուներին:

Պրոբացիայի շահառուի ուղեգրումը գործատուի մոտ. համագործակցության խնդիրներ.

Հայաստանում, Պրոբացիայի ծառայությունը համապատասխան կազմակերպությունների հետ կնքում է «Հանրային աշխատանքների ձևով պատիժ կրող անձին ժամանակացույցով սահմանված աշխատաժամերով ապահովելու մասին» պայմանագրեր, կազմում հանրային աշխատանքների կատարման վայրերի ընդհանուր ցանկ, որում առնվազն ընդգրկված են զինվորական այլընտրանքային ծառայություն անցնելու վայրերը: Պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը կազմակերպությունների կողմից առաջարկված հանրային աշխատանքների ձևով հանրային աշխատանքների կատարման վայրերի հայտի հիման վրա՝ ծանուցմամբ՝ պրոբացիայի շահառուին ուղեգրում է հանրային աշխատանքների կատարման համապատասխան վայր:

Կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ տարածքային մարմինը գրավոր համաձայնեցնում է հանրային աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերի պահանջները: Պրոբացիայի շահառուն և հանրային աշխատանքների կատարման վայրի աշխատակազմը յուրաքանչյուր օր ժամանակացույցում նշում են կատարում կատարված աշխատանքների ժամաքանակի մասին, որը հավաստվում է ամենօրյա պարբերականությամբ՝ վերջիններիս ստորագրությամբ: Ժամանակացույցի մեկական օրինակ կազմվում է տարածքային մարմնի, աշխատավայրի վարչակազմի և պրոբացիայի շահառուի համար:

Անկախ ամեն ինչից շահառուների ժամանակացույցի օրինակը մնում է գործատուի մոտ, որպեսզի ապահով լինի, չմնրթվի, չկորի: Ժամանակացույցում տեղերը փոխված են շահառուն պետք է ստորագրի գործատուի օրինակում, գործատուն՝ շահառուի, սակայն, քանի որ շատ ժամանակ շահառուները խառնում են թե որտեղ է պետք ստորագրել, ժամանակացույցի երկու օրինակում էլ երկուսն էլ ստորագրում են:

Գործատու

Ժամանակացույցի օրինակ՝

Ամիսը, ամսաթիվը, տարեթիվը	Հանրային աշխա-տանքների սկիզբը	Հանրային աշխա-տանքների ավարտը	Նախա-տեսվող աշխատա-ժամերի քանակը	Փաստացի աշխատած ժամերի քանակը	Գործատու կազմա-կերպության անվանումը	Շահառուի ստորագրու-թյունը (ստորագրվում է վարչակազմի օրինակում)	Վարչակազմի ներկայացուցչի ստորագրու-թյունը (ստորագրվում է շահառուի օրինակում)

Պրակտիկայում համագործակցության առաջարկությունը գործատուին ներկայացվում է Պրոբացիայի ծառայության կողմից, մինչդեռ սահմանված ընթացակարգը ենթադրում է հակառակ պրոցեսը[56]: Պատճառը գործատուի վրա դրվող պատասխանատվությունն է, նրա նկատմամբ լրացուցիչ վերահսկողությունը, նախկին համագործակցության բացասական փորձը, որոշ դեպքերում էլ՝ հանրային աշխատանքների վերաբերյալ իրազեկվածության պակասը և մեղադրյալների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները:

Ոչ մի հայտ չկա գործատուներից, անձնական խնդրանքների հիման վրա են կնքվում համագործակցության պայմանագրերը: Շատ գործատուներ մերժում են հանրային աշխատանքներով համագործակցությունը, քանի որ չեն ուզում առնչվել դատապարտյալների/ «հանցագործների» հետ: Սակայն, որոշ դեպքերում, տեղեկանալով որ հանրային աշխատանքը կատարվելու է անվճար հիմունքներով՝ գործատուները համաձայնվում են շահառուներին ներգրավել իրենց աշխատանքներում:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Պրոբացիայի ծառայության աշխատակիցների կարծիքով անհրաժեշտ է գործատուների նկատմամբ կա՛մ մի փոքր պարտադրանք կա՛մ շահագրգռվածություն մտցնել համագործակցության հարցում. օրինակ՝ հանրային աշխատանքներով գործատուների համար սահմանել հարկային արտոնություններ: Գործատուները խուսափում են համագործակցությունից, քանի որ համագործակցության շրջանակներում ձեռք են բերում որոշակի պարտականություններ, վարում լրացուցիչ փաստաթղթաշրջանառություն, նշանակում շահառուի աշխատանքի վերահսկման համար պատասխանատու աշխատակից, դառնում են Պրոբացիայի ծառայության և դատախազության վերահսկողության օբյեկտ, ինչը հաճախ ավելորդ լարվածություն է ստեղծում վերջիններիս շրջանում: Բացի այդ, հանրային աշխատանքներ կատարող դատապարտյալները գործատուներից են պահանջում աշխատանքային համազգեստ, վերարկու՝ ձմռան ամիսներին, ձեռնոցներ՝ ձյուն մաքրելու համար, աշխատանքային գործիքներ, ինչպիսի ռեսուրսներ գործատուները չունեն:

[56] ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի N 452-Ն որոշում, կետ 28, https://www.arlis.am/documentview.aspx?docid=176045:

Ի լրումն, կազմակերպությունները պարտավոր են հանրային աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքերում այդ մասին անհապաղ տեղեկացնելու Պրոբացիայի ծառայությանը[57]:

Այս հարցի շրջանակներում հարկ է անդրադառնալ գործատուներին ուղղված սպառնալիքներին: Հետազոտության շրջանակներում արձանագրվել են դեպքեր, երբ գործատուն հրաժարվել է Պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրից, վախենալով, որ շահառուն կամ քրեակատարողական հիմնարկում գտնվող քրեական հեղինակությունները, քրեական ենթամշակույթին հարող անձինք կվնասեն իր աշխատակիցներին:

«Գողական» է զանգել գաղութից՝ պահանջով, որ շահառուն չաշխատի: Գործատուները վախենում են, սակայն իրական պատճառը չեն ասում Պրոբացիայի ծառայությանը շահառուին աշխատանքի վերցնելուց հրաժարվելու դեպքում. նշում են, որ աշխատատեղեր չունեն:

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Գործատու ՀՈԱԿ-ի աշխատակիցներին ասվել է, որ չմտնեն կոնֆլիկտի մեջ իրենց զանգահարող քրեական ենթամշակույթին հարող անձանց հետ, այլ միանգամից ահազանգեն Պրոբացիայի ծառայություն: Դեպք է եղել, որ թաղային հեղինակությունները զանգել են ՀՈԱԿ-ի ստորաբաժանում, ասել, որ շահառուն չպետք է աշխատի, քանի որ այն պատիվ չի բերում: Հաշվի առնելով, որ ստորաբաժանումների պետերը 25-ից 35 տարեկան տղաներ են, ՀՈԱԿ-ի տնօրինությունը կոնֆլիկտային իրավիճակների ստեղծման ռիսկ է տեսնում: Հանրային աշխատանքներից հրաժարվելով, գործատուն Պրոբացիայի ծառայությանը չի հայտնում ճշմարտությունը՝ հետագայում ավելի մեծ խնդիրներից զերծ մնալու նկատառումներով, քանի որ այս դեպքում Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ անձի պատիժը կփոխարինվի ազատազրկմամբ և, հնարավոր է, թաղային հեղինակությունները գան ստորաբաժանման պետի թաղամաս՝ Պրոբացիայի ծառայություն զանգելու վերաբերյալ պարզաբանումներ անելու նպատակով:

Գործատու

Մեկ այլ խնդիր է մանկապարտեզներում հանրային աշխատանքների կազմակերպումը՝ բոլորի՝ թե՛ երեխաների, թե՛ դատապարտյալի շահերի հավասարակշռման տեսանկյունից: Մանկապարտեզներից մեկի տնօրենի պնդմամբ, ծնողների շրջանում կարող են խնդիրներ և դժգոհություններ առաջանալ՝ մանկապարտեզում օտար մարդու ներկայությունից, ուստի, ըստ տնօրենի, ցանկալի է շահառուներ չուղարկել մանկապարտեզներ: Տնօրենի խոսքով, անգամ կին շահառու ուղարկելը նպատակահարմար չէ, քանի որ մանկապարտեզում կանոնները շատ խիստ են,

[57] ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի N 452-Ն որոշում, հավելվածի 41-րդ կետ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=176045:

խոցելիությունն ու պատասխանատվությունը՝ մեծ, և անգամ խոհանոցում արգելվում է կողմնակի անձանց մուտքը, շահառուին շենք մուտք գործել չի թույլատրվում։

Առաջին 10-15 օրը շատ լարված եմ եղել և անընդհատ հետևել եմ շահառուին, ամեն դեպքում մտածում ես մարդը դատվածություն է ունեցել, փորձում էի լուսամուտները, պահեստների դռները փակ պահել, բայց ընթացքում այդ սառույցը կոտրվեց։

Գործատու

Երբեմն էլ հենց գործատուներն են կանգնում իրավական պատասխանատվության առաջ։

Օրինակ՝ Նոյեմբերյանի բնակիչ հանրային աշխատանքներ կատարող մի շահառու Գործատուին խնդրել էր շուտ դուրս գալ աշխատանքից, քանի որ երեխան ջերմել է։ Գործատուն թույլ է տվել, վերջինս ստորագրել է և գնացել։ Ավելի ուշ պարզվել է, որ շահառուն հատել է Հայաստանի Հանրապետության սահմանը և գնացել է Վրաստան։ Արդյունքում, գործատուին մեղադրել են պաշտոնեական կեղծիքի մեջ։ Ստացվում է պատասխանատվություն է դրվում գործատուի վրա։

Մեկ այլ դեպքով, Պրոբացիայի ծառայությունը համագործակցության պայմանագիր էր կնքել հասարակական կազմակերպության հետ՝ շահառուի կողմից հանրային աշխատանքների կատարման նպատակով։ Անձին ցույց են տվել իր աշխատանքի բնույթը, որից հետո անձը ՀԿ-ի դեմ հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել՝ լիազորությունների չարաշահման հատկանիշներով։

Պրոբացիայի ծառայության աշխատակից

Լինում են դեպքեր, երբ Պրոբացիայի շահառուն է հրաժարվում աշխատել կոնկրետ գործատուի մոտ, օրինակ՝ ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում։ Ոստիկանության ներկայացուցիչների կարծիքով մեղադրյալները չեն ուզում շփվել ոստիկանության հետ, որպեսզի նրանց չասեն, որ կապ ունեն ոստիկանության հետ՝ «գործ տվող են»։ Ըստ ոստիկանության աշխատակիցների՝ *անծանոթ շահառուն խուսափում է ոստիկանությունում հանրային աշխատանքներ կատարելուց, միայն «իրենց մոտ մեծացած», մի քանի անգամ դատապարտված անձինք են համաձայնվում։*

Գործատուների հետ համագործակցության խնդիրներին զուգահեռ արձանագրվել են նաև շահառուների վերասոցիալականացման դրական օրինակներ, հաջողված պատմություններ։

Օրինակ՝ գործատուներից մեկի ներկայացմամբ, իրենց հիմնարկում շահառուները սիրով, նվիրված և պարտաճանաչ են կատարել հանրօգուտ աշխատանքները՝ ըստ համապատասխան գրաֆիկի։ Գործատուի կողմից անգամ տրվել է շնորհակալագիր։ Գործատուն հանրային աշխատանքի ժամկետի ավարտից հետո շահառուին առաջարկել է

շարունակել աշխատանքը նույն կազմակերպությունում, սակայն անձը հրաժարվել է ցածր վարձատրության պատճառով:

Մեկ այլ դեպքում, շահառուն՝ նույնիսկ հանրային աշխատանքների կատարման համար նախատեսված ժամաքանակը լրանալուց հետո՝ 10 օր շարունակ այցելել է մանկապարտեզ՝ կիսատ թողած աշխատանքը շարունակելու նպատակով: Ըստ Գործատուի շահառուն վերջին օրը իր հետ բերել է անհրաժեշտ պարագաներ և ձևավորել բակի եղևնիները, գնել է նաև մեծ տոպրակով կոնֆետներ և փոխանցել խոհարարին, որպեսզի բաժանեն երեխաներին:

Մեկ դեպք ևս ներկայացվեց, երբ Արցախի խաղաղ բնակչության տեղահանումների ժամանակ, մի շահառու իր անձնական մեքենայով արցախցիներին օգնել է տեղափոխել իրերը, սնունդ է բաժանել իր մեքենայով:

Գործատու կազմակերպությունների ցանկ, առաջարկվող աշխատանքներ.

Հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումն ապահովելու նպատակով Պրոբացիայի ծառայության ստորաբաժանումը հանրային աշխատանքների կատարման վայրերը որոշելու նպատակով համագործակցում է

- պետական մարմինների,
- առևտրային կազմակերպությունների,
- ոչ առևտրային կազմակերպությունների,
- հիմնարկների,
- տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Գործնականում, Պրոբացիայի ծառայությունն առավելապես համագործակցում է պետական մարմինների՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի, տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքապետարանների, Արմավիրի քաղաքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկի, ոչ առևտրային կազմակերպությունների՝ համատիրությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջի, «Մղարթի հիմնական դպրոցի», ՀՀ ԱՆ Փորձագիտական կենտրոնի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ Նոր Խարբերդի «Արմանուշ և Մուշեղ Գյուլբենկյանների անվան մանկապարտեզի», Նոր Հաճնի համայնքապետարան «Կոմունալ տնտեսության», «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և այլ կազմակերպությունների հետ:

Չնայած մասնավոր ոլորտում գործող ընկերությունների հետ Պրոբացիայի ծառայության սակավաթիվ համագործակցություններին, այդպիսիք այնուամենայնիվ առկա են. ստորաբաժանումները համագործակցում են Արտաշատի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի, «ՀԷՑ» «Տաթևի» ՓԲԸ մասնաճյուղի, «Հայաստան» ՄՀԿ Ստեփան Սարգսյանի անվան Վանաձորի համալիր մարզադպրոց մարզական հասարակական կազմակերպության հետ: Հարկ է նշել, որ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, **հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը Պրոբացիայի ծառայության սկզբունքներից է:** Հետևաբար հանրային

աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել համագործակից մասնավոր ոլորտի կազմակերպությունների ցանկը, ընդգրկելով այն հասարակական և այլ կազմակերպություններին, այդ թվում՝ արտադրամասերին, գործարաններին, Ճանշին ՓԲԸ-ին, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին, որոնք իրենց գործունեության, ծրագրերի, կանոնադրության, ռազմավարության շրջանակներում իրականացվում են հանրային նշանակության ծրագրեր՝ մարդասիրական, իրավապաշտպան, բնապահպանական, մշակութային, սոցիալական, կրթական և այլն: Չէ՞ որ, **հանրային աշխատանքների նպատակը ոչ թե սոսկ պետության, այլ հանրության համար որոշակի շոշափելի կամ ոչ շոշափելի բարիք ստեղծելն է, որից որոշ չափով անուղղակիորեն օգուտ է ստանում պետությունը:** Օրինակ, Շվեյցարիայում չվճարվող հանրային աշխատանքը կատարվում է հանրության շահերի կամ կարիքավորներին օգնելու համար: Լեհաստանում, հանրային աշխատանքը կոորդինացվում է բուժհաստատությունների և սոցիալական խնամքի կենտրոնների ու տարբեր ընկերությունների կողմից, որպեսզի շոշափելի արդյունք տա տեղական համայնքին, ինչպես նաև փոխի հանցանք կատարած անձի աշխարհայացքն ու կյանքի նպատակները:

Հայաստանի Հանրապետությունում, հանրային աշխատանքների կատարման վայրը Պրոբացիայի ծառայության ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում հաշվի են առնվում հանրային աշխատանքների կատարման վայրի և պրոբացիայի շահառուի հաշվառման/փաստացի բնակության վայրի միևնույն համայնքի կամ Երևան քաղաքում վարչական շրջանի շրջանակում տեղակայված լինելու հանգամանքը: Յուրաքանչյուր դեպքում **հանրային աշխատանքների կատարման վայրը պետք է լինի պրոբացիայի շահառուի հաշվառման/փաստացի բնակության վայրից ոչ ավելի, քան 30 կմ հեռավորության վրա:** Հանրային աշխատանքների կատարման վայրը ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում հնարավորինս հաշվի է առնվում նաև պրոբացիայի շահառուի կարծիքը: Հետազոտության շրջանակներում հանրային աշխատանքների կատարման վայրի և պրոբացիայի շահառուի հաշվառման/փաստացի բնակության վայրի միջև հեռավորության չափորոշիչների խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Պրակտիկայում 30 կմ հեռավորության չափանիշը կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից էական չէ, քանի որ Հայաստանը փոքր երկիր է և շատերը շատերին կարող են ճանաչել:

Դատախազ

Առաջարկվող աշխատանքների բնույթը.

Անդրադառնանք գործատու կազմակերպությունների կողմից առաջարկվող աշխատանքների բնույթին՝ հիմք ընդունելով օրենսդրական կարգավորումները: Այսպես, ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թ.-ի N 452-Ն որոշմամբ[58] սահմանվում են հանրային աշխատանքների ձևով պատիժը կատարելիս Պրոբացիայի շահառուին առաջարկվող աշխատանքները.

1) բանվորական աշխատանքներ (բակերի բարեկարգում, շենքերի տանիքների վերանորոգում, ցանկապատերի ներկում, շենքերի կամ շինությունների կոսմետիկ վերանորոգում).

2) ոռոգման աշխատանքներ.

[58] Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=176045:

3) կանաչապատման աշխատանքներ.

4) հողի մշակման աշխատանքներ.

5) ճանապարհային նշանները ներկելու, մոնտաժելու աշխատանքներ.

6) պատմամշակութային վայրերի կամ զբոսայգիների մաքրման և բարեկարգման աշխատանքներ.

Գործատու կազմակերպությունների ցանկը պարբերաբար վերանայվել է, սակայն հանրային աշխատանքների կատարման բնույթը փոխելու դեպքեր չեն արձանագրվել[59] առնվազն 2017թ.-ից՝ շուրջ 7 տարի: Այն ներառում է բացառապես «ցածր» վարկանիշով ֆիզիկական բնույթի ծանր աշխատանքները: Մինչդեռ միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ հանրային աշխատանքների շարքում, սովորաբար, ներառվում են ծերերին և հաշմանդամներին աջակցությունը, աղքատների համար սննդի մատակարարումը, դասավանդումը, հանրային շինություններ, գերեզմաններ խնամելը, այգեգործությունը, կենդանիների նկատմամբ խնամքը, վարչական աշխատանքները, աշխատանքը գրադարանում և այլն: Օրինակ, Լեհաստանում, հանրային աշխատանքները կատարվում են նաև հիվանդանոցներում և խնամքի կենտրոններում, որի նպատակներից մեկը հանցանք կատարած անձի աշխարհայացքի ու կյանքի նպատակների վերանայումն ու վերաբերմունքի փոփոխությունն է[60]: Հետազոտության շրջանակներում շահագրգիռ կողմերը առաջարկել են համալրել հանրային աշխատանքների ցանկը՝ նախատեսելով ոսկերիչի, արվեստի և արհեստի ոլորտի մասնագետի, բուժքրոջ/բուժակի, մայրապետի, վարորդի, զոդողի, խոհարարի, հրուշակագործի, դերձակի, շինարարության, վերանորոգման վարպետի, համատիրությունում իրավաբանի մասնագիտությունները:

Ի տարբերություն նախկին՝ ՀՀ կառավարության 17 օգոստոսի 2017 թ.-ի N 1019-Ն որոշմամբ նախատեսված իրավակարգավորումների[61], Պրոբացիայի ծառայության գործող կանոնակարգով[62] նախատեսվել են հանրային աշխատանքների արդյունավետությանը նպաստող լրացուցիչ երաշխիքներ: Մասնավորապես, Պրոբացիայի ծառայության ստորաբաժանման կողմից պրոբացիայի շահառուին պետք է առաջարկվի համապատասխան աշխատանք: **Պրոբացիայի շահառուին համապատասխան աշխատանքներն առաջարկելիս ստորաբաժանման կողմից հնարավորինս հաշվի է առնվում պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ:** Հարկ է նշել, որ նման կարգավորման նախատեսումը՝ առանց հանրային աշխատանքների ցանկի փոփոխություն, իմաստազուրկ է, քանզի գործնականում չի հանգեցնելու էական հաջողությունների: **Շահառուներին առաջարկվող աշխատանքների ցանկն առհասարակ գենդերազգայուն չէ և հաշվի չի առնում սեռերի սոցիալական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:** Մինչդեռ, իգական սեռի շահառուների թիվը քիչ չէ հանրային աշխատանքների ոլորտում: ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայության հանրային աշխատանքներ պատժատեսակով 2023թ.-ին իգական սեռի շահառուների թիվը կազմել է 15՝ Երևանում 5 շահառու,

---

[59] Տե՛ս Պրոբացիայի ծառայության 30.11.2023թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 10.11.2023թ.-ի հարցմանը:

[60] Community sanctions and measures in Europe, Some results from a recent survey, Ioan Durnescu, available at https://www.cep-probation.org/wp-content/uploads/2019/01/VOL-1.1-Community-sanctions-and-measures-in-Europe.-Some-results-from-a-recent-survey.pdf.

[61] ՀՀ կառավարության 17 օգոստոսի 2017 թվականի թիվ 1019-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115649:

[62] ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի թիվ 452-Ն որոշում, հավելվածի 44-րդ կետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176045:

Արագածոտնի մարզում 1 շահառու, Արմավիրի մարզում 2 շահառու, Լոռու մարզում 1 շահառու, Կոտայքի մարզում 4 շահառու Շիրակի մարզում 2 շահառու, իսկ 2024թ.-ի ապրիլի 15-ի դրությամբ ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունում եղել է իգական սեռի 10 շահառու՝ մարզերում 7 շահառու /Լոռու մարզում 2 շահառու, Շիրակի մարզում 2 շահառու, Կոտայքի մարզում 2 շահառու և 1 շահառու Արմավիրի մարզում/: 2023թ.-ի և 2024թ.-ի ապրիլի 15-ի դրությամբ **իգական սեռի շահառուների հանրային աշխատանքների կատարման վայրեր են հանդիսացել ՊՈԱԿ-ը, մարզի համայնքի բնակավայրի վարչական տարածքը, ՊՓԲԸ-ն, ՀՈԱԿ-ը, ՀՀ ՆԳՆ բաժինը, ընդհանուր իրավասության դատարանը, համայնքապետարանը: Շահառուների կողմից կատարվել են մաքրության, հարակից տարածքների բարեկարգման, ավելորդ ծառերի հատման, ծաղկանոցների մշակման, խնամքի և կանաչապատման աշխատանքներ**:

Հանրային աշխատանքներ նշանակելիս անհրաժեշտ է հաշվի առնել շահառուի կրթությունը, գիտելիքները, ունակությունները, հմտությունները, կարիքները, պետք է ցուցաբերել անհատական մոտեցում: Օրինակ, հետազոտության շրջանակներում, շահառուներից մեկը կարողացել է կատարել զոդման (сварка) աշխատանքներ և այն կազմակերպությունը, որին անհրաժեշտ էր նման աշխատող, ընդունել է անձին՝ որպես հանրային աշխատող: Մեկ այլ դեպքում, անձը եղել է հաշվապահ, հասկացել է նաև ատաղձագործությունից (плотник) և ներգրավվել է այդ աշխատանքներում: Մեկ այլ դեպքում, շահառուն մասնագիտությամբ խոհարար է եղել, մինչդեռ ներգրավվել է դատարանի աշխատանքներում՝ շինարարությունում՝ բազալտ քարեր է կպցրել:

Հատկանշական է, որ ոլորտում ներգրավված կառույցների ներկայացուցիչների կարծիքներն այս հարցում միատեսակ չեն: Դատախազության ներկայացուցիչը գտնում է, որ հանրային աշխատանքների ցանկը պարտադիր չէ, որ ներառի մեղադրյալի մասնագիտությանը և հմտություններին համապատասխան աշխատանքներ՝ թեկուզ ծրագրավորում և այլն, քանի որ նման պայմաններում նա այդ աշխատանքը հաճույքով կանի՝ որպես սիրելի աշխատանք և դա իր մոտ անհարմարության զգացում չի առաջացնի, մինչդեռ անձը պետք է զգա պատժի բնույթը, ունենա «դիզկոմֆորտ»: Այդ դեպքում է հնարավոր, որ պատիժը նպատակին ծառայի: Պրոբացիայի ծառայության ներկայացուցչի կարծիքով նույնպես հանրային աշխատանքներ կատարող անձանց նկատմամբ իրենց մասնագիտական հմտություններին համապատասխան աշխատանք կատարելը, օրինակ՝ բժշկի կողմից որպես հանրային աշխատանքներ՝ բժիշկ աշխատելը, չի համապատասխանի պատժատեսակի նշանակությանը:

Վերահսկողությունը.

Պատժի իրականացման և վերահսկողության հստակ մեխանիզմների սահմանումը հնարավորություն է տալիս հետևել դատապարտյալի կողմից հանրային աշխատանքի կատարման ընթացքին: Պրոբացիայի ծառայողն ամիսն առնվազն մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ, այցելում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքների կատարման վայր՝ եզրափակիչ դատական ակտի պահանջների կատարման ընթացքը վերահսկելու և տվյալ աշխատավայրի վարչակազմից պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքով կազմվում է արձանագրություն: Պրոբացիայի ծառայողի առաջին այցելությունը հանրային աշխատանքների կատարման վայրի վարչակազմ իրականացվում է հանրային աշխատանքները

սկսելու օրը: Գործնականում, Պրոբացիայի աշխատակիցների այցերը հանրային աշխատանքների կատարման վայրեր կատարվում են ավելի հաճախակի, քան օրենքով սահմանված պարտադիր նվազագույնը՝ ընդհուպ մինչև ամսական 4 և ավելի անգամներ:

Պրոբացիայի ծառայողների պնդմամբ խոշորացված համայնքներում հանրային աշխատանքների նկատմամբ վերահսկողությունն ավելի բարդ է, քանի որ շահառուն մի օր գտնվում է մի գյուղում, մյուս օրը՝ մյուս գյուղում: Խոշորացված համայնքի պատասխանատուն է տեղյակ լինում:

Հանրային աշխատանքների կատարման ընթացքում վերահսկողություն է իրականացնում նաև գործատուն՝ այդ նպատակով պատասխանատու աշխատակից նշանակելու միջոցով: Սա ևս մարդկային և ֆինանսական բեռ է գործատուների համար, ինչի նպատակով կողմերը առաջարկում են Պրոբացիայի ծառայության ռեսուրսների հզորացում, կադրերի համալրում և անձամբ Պրոբացիայի ծառայության աշխատակցի կողմից հանրային աշխատանքների ողջ գործընթացի վերահսկում:

ՀՀ գլխավոր դատախազությունը նույնպես պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ունի պատժի կիրառման նկատմամբ անմիջական հսկողության, ստուգումների իրականացման լիազորություն: Վերջինս այցելում է հանրային աշխատանքների կատարման վայրեր տարեկան ընդհուպ մինչև 6 անգամ:

Ոլորտում ներգրավված մարմինների կարողությունների հզորացում.

Հանրային աշխատանքների նշանակման և իրականացման գործընթացի պատշաճ կազմակերպման համար կարևոր է գործընթացում ներգրավված բոլոր կողմերի գիտելիքների ու հմտությունների հզորացումը՝ թեմատիկ ուղեցույցերի և հանձնարարականների մշակումը, ոլորտային ուսումնասիրությունների կատարումը, վերապատրաստումների անցկացումը, որպիսիք՝ կոնկրետ հանրային աշխատանքներ պատժատեսակի վերաբերյալ առկա չեն թե՛ դատախազների, թե՛ դատավորների, թե՛ փաստաբանների շրջանում:

Սակայն, առավել առանցքային դերակատարում ունեցող մարմինը Պրոբացիայի ծառայությունն է, որի մասնագիտական ներուժն ու ռեսուրսները հաճախ պայմանավորում են հանրային աշխատանքների՝ որպես պատժի դերի ընկալումը ինչպես մեղադրյալի, այնպես էլ հասարակության կողմից: Հետազոտության շրջանակներում դատախազների և դատավորների կողմից մտահոգություն է հայտնվել Պրոբացիայի ծառայության ռեսուրսների անբավարարության, աշխատակիցների ձեռնհասության, վարձատրության չափի, աշխատանքում նրանց շահագրգռվածության վերաբերյալ: Նշենք, որ թվարկված խնդիրների լուծման նպատակով դեռևս 2023 թ.-ի դեկտեմբերի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2024թ.-ի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել Պրոբացիայի ծառայության մասին օրենքը[63], որով Պրոբացիայի ծառայությունը սահմանվել է որպես պետական ծառայության առանձին տեսակ, իսկ Պրոբացիայի ծառայությունում ծառայողները՝ Պրոբացիայի ծառայողներ /նախկինում՝ քաղաքացիական ծառայողների փոխարեն/: Եթե նախկինում, Պրոբացիայի ծառայող կարող էին հանդիսանալ 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները[64], ապա այժմ պաշտոնի կարող են նշանակվել որոշակի պահանջներին (հայերենի իմացություն, բարձրագույն կրթություն, Հայաստանի

[63] Պրոբացիայի ծառայության մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187967:
[64]Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքը, հոդված 8, 2-րդ մաս, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193796:

Հանրապետության քաղաքացիություն, տարիքային շեմ, մասնագիտական պահանջներ և այլն) բավարարող քաղաքացիները: Բացի այդ, ընդլայնվել են Պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները, վերանայվել է ծառայողների վարձատրությունը[65]: Կարևոր փոփոխություններից է Պրոբացիայի ծառայությունում հերթապահության սահմանումը, արտաժամյա ծառայության հնարավորությունը՝ անհետաձգելի կամ հրատապ խնդիրներ առաջանալու դեպքերում, քանզի նախկինում առաջանում էին խնդիրներ ոչ աշխատանքային ժամերին և օրերին պրոբացիայի ծառայողի կողմից օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման, օրինակ՝ հանրային աշխատանքների վերահսկողության համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է գործեն այնպես, որպեսզի նրանց կարգավիճակն ու աշխատանքն արժանանան արդարադատության համակարգի այլ մարմինների և քաղաքացիական հասարակության հարգանքին: Այս նպատակով Պրոբացիայի ծառայության մասին օրենքով նախատեսվել է նաև Պրոբացիայի ծառայողին համազգեստ և ծառայողական վկայական տրամադրելու հնարավորություն[66]: Նշենք, որ Պրոբացիայի ծառայության մասին օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվելու են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում՝ մինչև 2024թ.-ի հուլիսի 1-ը, ուստի գործնականում դրանց արդյունավետության գնահատումը հնարավոր կլինի հետագայում:

Պրոբացիան պետք է լինի ուժային կառույց, օրինակ՝ ունենա համազգեստ, միգուցե զենք, որ շահառները զգոնանան այդ կառույցի ներկայացուցչի ներկայությունից: Գործատուների մոտ այցերը պրոբացիայի աշխատակիցները կատարում են քաղաքացիական հագուստներով:

Դատախազ

Վաղեմության ժամկետն անցնելու խնդիրներ. Շահառուին վարույթն իրականացնող մարմին՝ դատարան հարկադրաբար ներկայացնելը.

Հանրային աշխատանքների կատարման փուլում մեկ այլ ռիսկ է **մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին պատժից ազատելը[67]:** Մասնավորապես, ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական **դատավճիռն ի կատար չի ածվել 1 տարվա ընթացքում**: Չնայած, օրենսդրությունը նախատեսում է հիմնական պատիժը կրելուց խուսափելու դեպքում վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման հնարավորություն, այնուամենայնիվ պրակտիկայում առաջանում են խնդիրներ: Օրինակ, երբ անձը խուսափում է նշանակված հիմնական պատիժ հանրային աշխատանքները կատարելուց և միևնույն ժամանակ խուսափում է մասնակցել դատարանում հանրային աշխատանքները ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ միջնորդության քննարկմանը, ժամկետը շարունակում է հոսել՝ առանց

---

[65] Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=187968:

[66] Պրոբացիայի ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 31, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187967:

[67] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 90, www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:

կասեցման: Նման իրավիճակներում դատարանում վարույթն իրականացվում է մեղադրյալի բացակայությամբ (հեռակա վարույթ)[68]: Շահառուին դատարան ներկայացնելու պարտականության հարցը գործնականում դժգոհությունների առիթ է դարձել դատարանների և Պրոբացիայի ծառայության միջև: Դատավորները գտնում են, որ հանրային աշխատանքների կատարման կարգն ու պայմանները պահպանելու նկատմամբ վերահսկողությունը, այդ թվում՝ դատարանում Պրոբացիայի շահառուի ներկայությունը ապահովելը Պրոբացիայի ծառայության գործառույթն է, իսկ Պրոբացիայի ծառայության աշխատակիցները գտնում են, որ շահառուին վարույթն իրականացնող մարմին՝ դատարան հարկադրաբար ներկայացնելը դատարանի իրավասությունն է[69]: Գործնականում ստեղծվել է մի իրավիճակ, որում օրենսդրական մակարդակով հարցը կարծես թե կարգավորված է՝ դա դատարանի իրավասությունն է, սակայն կառույցների ռեսուրսների ճիշտ բաշխման և փոխարդյունավետ գործելակերպի ձևավորման անհրաժեշտություն կա: Վաղեմության ժամկետների հոսքի խնդրիր կա նաև այն դեպքերում, երբ պատժի կատարումը հետաձգվում է, օրինակ՝ հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոբացիայի ինստիտուտի ներդրումը, ինչպես նաև հանրային աշխատանքներ պատժատեսակի ամրագրումը որպես հիմնական կամ փոխարինող պատիժ, պայմանավորված է եղել քրեական արդարադատության ոլորտում պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելու անհրաժեշտությամբ: Այդ տրամաբանության շրջանակներում 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքում վերաձևակերպվել են պատժի նպատակները. «Վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները»: Բացի այդ, վերանայվել է հանրային աշխատանքների ինստիտուտը՝ նվազեցնելով հանրային աշխատանքների տևողությունը 270-2200 ժամից՝ 60-270 ժամի, վերացնելով հանրային աշխատանքների նշանակման՝ նախկինում գործող սահմանափակումները /առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց նկատմամբ/, նախատեսելով մեղադրյալի համաձայնության նախապայմանը, շահառուին աշխատանք առաջարկելիս նրա սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքները հաշվի առնելը և այլն:

Նշված զարգացումներին զուգահեռ սակայն չեն արդիականացվել հանրային աշխատանքների դատապարտված շահառուներին առաջարկվող աշխատանքների և աշխատանքի կատարման վայրերի/գործատուների ցանկը, ինչը ստվերում է շահառուների վիճակի բարելավմանն ուղղված

[68] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 476, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195774:
[69] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 141, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195774:

օրենսդրական փոփոխությունների կարևորությունը և հնարավոր հաջողությունները իրավակիրառ պրակտիկայում: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը՝ հանրային աշխատանքների և նշանակման, և իրականացման փուլերում առկա են պրակտիկ և իրավական առանձին խնդիրներ, որոնք ուղղակիորեն անդրադառնում են պատժի արդյունավետության վրա: Այդ հիմնախնդիրներն են.

Անձի առողջական վիճակի գնահատումը հանրային աշխատանքներով պատիժ նշանակելիս կամ իրականացնելիս. Հանրային աշխատանքներ նշանակելիս դատարանում գնահատման ենթակա առանձին հանգամանք է մեղադրյալի առողջական վիճակը/ հաշմանդամությունը: Գործող օրենսդրությամբ անձի առողջական վիճակը հանրային աշխատանքների նշանակման արգելք չէ, սակայն կարող է հանգեցնել պատժից ազատման՝ այն դեպքում, երբ հիվանդության հետևանքով անձը զրկվում է հանրային աշխատանքների հետագա կատարման հնարավորությունից: Օրինակ՝ ձեռքի մի քանի մատների բացակայությունը գործնականում դատարանի կողմից դիտարկվել է որպես հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման խոչընդոտ, մինչդեռ պատիժը կրելիս առողջական վիճակի վատթարացման դեպքում շահառուից պահանջվել է հիվանդության հիմնավորման ավելի բարձր շեմ՝ ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի N 825-Ն որոշմանը համապատասխան տրված Բժշկական հանձնաժողովի եզրակացություն: Նշված որոշումը սահմանում է բացառապես ծանր հիվանդությունների (խանգարումներ, վիճակներ) ցանկը, որոնք խոչընդոտում են պատիժը կրելուն, ընդ որում ցանկը կազմված է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների և պատիժների տրամաբանությամբ: ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի N 825-Ն որոշման կիրառումը հանրային աշխատանքների դատապարտված անձանց նկատմամբ անհամաչափ է, քանզի օրենքը չի նախատեսում հանրային աշխատանքներից ազատում բացառապես ծանր հիվանդությունների դեպքում, այլ այնպիսի հիվանդությունների դեպքում, որոնք կոնկրետ իրավիճակում, ընտրված աշխատավայրում աշխատանքը կատարելիս կարող են հանդիսանալ խոչընդոտ:

Հանրային աշխատանքներով պատիժ նշանակելիս մեղադրյալի համաձայնությունը հաշվի առնելը. խոչընդոտները պատժի փոխարինման գործընթացում. Մեղադրյալի համաձայնության վերաբերյալ գործնականում առկա են իրարամերժ մեկնաբանություններ: Մի կողմից, պատիժը պետական հարկադրանքի միջոց է, նշանակվում է առանց հաշվի առնելու հանցագործություն կատարած անձի կարծիքը՝ օբյեկտիվորեն գնահատելով կատարված արարքը: Մյուս կողմից, կոնկրետ պատժատեսակի՝ հանրային աշխատանքների վերաբերյալ դրույթներում օրենսդիրը նախատեսել է դատապարտյալի համաձայնության նախապայմանը, սակայն այն գործնականում հանգեցնում է փակուղային իրավիճակների: Օրինակ, երբ անձը տուգանքը վճարելու անհնարինության դեպքում հրաժարվում է այն փոխարինել հանրային աշխատանքներով, իսկ ազատազրկում նրա նկատմամբ չի կարող նշանակվել, քանի որ արարքը կատարել է առաջին անգամ, ստացվում է անձը մնում է անպատիժ. չի վճարում տուգանքը, չի կատարում հանրային աշխատանքները, չի ազատազրկվում, իսկ շատ շահառուների դեպքում կիրառելի չէ նաև կարճաժամկետ ազատազրկում պատժատեսակը:

Հանրային աշխատանքների կատարման վայրը որոշելը. Հանրային աշխատանքները նշանակվում է դատարանի կողմից, իսկ դրա կատարման վայրը որոշում է Պրոբացիայի ծառայությունը: Դատարանները, ինչպես նաև դատավարության կողմերը հասանելիություն չունեն հանրային աշխատանքներով գործատու կազմակերպությունների ցանկին, առաջարկվող աշխատանքների բնույթին, որի պայմաններում մեղադրյալները դատարանում պարզապես

համաձայնություն են տալիս պատասխանատվության տեսակին՝ չունենալով աշխատանքի բնույթի և կատարման վայրի մասին տեղեկություն։ Մեղադրյալները աշխատանքի վայրի և բնույթի մասին տեղեկատվությունը ստանում են միայն պատժի նշանակումից հետո՝ Պրոբացիայի ծառայությունում, և հաճախ հրաժարվում հանրային աշխատանքների կատարումից։

Հանրային աշխատանքների դատապարտված անձանց ռիսկերի և կարիքների գնահատումը, վերասոցիալականացման ծրագրերը. Պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատումն իրականացվում է 2021թ.-ի հունիսի 28-ին ՀՀ արդարադատության նախարարի կողմից ընդունված «Պրոբացիայի ծառայության չափահաս և անչափահաս շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքների հաստատման և փորձարկման մասին» N 272-Լ հրամանին համապատասխան։ Պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները նախատեսված են յուրաքանչյուր շահառուի համար, սակայն գործնականում դրանք չեն կիրառվում հանրային աշխատանքների դատապարտված անձանց նկատմամբ, գնահատման առանձին գործիք ևս առկա չէ, շահառուները չեն մասնակցում նաև վերասոցիալականացման ծրագրերին։ Ընդ որում, վերասոցիալականացման միջոցառումների շրջանակներում առաջին մասնագիտական ուսուցման կենտրոնը բացվել է Արարատ գյուղում՝ 2022թ.-ի նոյեմբերին։ Փոքր բնակավայրում գտնվելու և համապատասխան ցուցանակով մուտք ունենալու պայմաններում շենք մուտք գործող և ելք անող անձինք թիրախավորվում են, ուստի անհրաժեշտ է վերանայել տվյալ գյուղում ուսումնական կենտրոնի գոյության նպատակահարմարությունը։

Համագործակցությունը գործատու կազմակերպությունների հետ. Պրակտիկայում համագործակցության առաջարկությունը գործատուին ներկայացվում է Պրոբացիայի ծառայության կողմից, մինչդեռ սահմանված ընթացակարգը ենթադրում է հակառակ պրոցեսը։ Պատճառը գործատուի վրա դրվող պատասխանատվությունն է, փաստաթղթաշրջանառության ավելացումը, կազմակերպության նյութական /աշխատանքի կատարման համար շահառուին հատկացվող իրեր՝ համազգեստ, ձեռնոց, վերարկու/ և մարդկային /աշխատանքը հսկելու համար նշանակված պատասխանատու անձ/ ռեսուրսները, լրացուցիչ վերահսկողությունը, նախկին համագործակցության բացասական փորձը, գործատուի աշխատողների հասցեներին քրեական հեղինակությունների կողմից հնչեցված սպառնալիքները, որոշ դեպքերում էլ՝ հանրային աշխատանքների վերաբերյալ իրազեկվածության պակասը և մեղադրյալների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները։ Այնուամենայնիվ, Պրոբացիայի ծառայությունն ունի ձևավորված համագործակցության փորձ, որի շրջանակներում համագործակցում է պետական և համայնքային կազմակերպությունների հետ։ Մասնավոր ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության դեպքերը սակավաթիվ են։

Հանրային աշխատանքների դատապարտված շահառուներին առաջարկվող աշխատանքների ցանկը. Առաջարկվող աշխատանքների ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թ.-ի N 452-Ն որոշմամբ, դրանք են՝ բանվորական աշխատանքները (բակերի բարեկարգում, շենքերի տանիքների վերանորոգում, ցանկապատերի ներկում, շենքերի կամ շինությունների կոսմետիկ վերանորոգում), ոռոգման աշխատանքները, կանաչապատման աշխատանքները, հողի մշակման աշխատանքները, ճանապարհային նշանները ներկելու, մոնտաժելու աշխատանքները, պատմամշակութային վայրերի կամ զբոսայգիների մաքրման և բարեկարգման աշխատանքները։ Հանրային աշխատանքների կատարման բնույթը փոխելու դեպքեր չեն արձանագրվել առնվազն 2017թ.-ից՝ շուրջ 7 տարի։ Հանրային աշխատանքները նշանակելիս հաշվի չի առնվում

շահառուի կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքները։

Հանրային աշխատանքի տևողությունը. Հետազոտության շրջանակներում գրեթե բոլոր շահառուները ցանկություն են հայտնել փոխելու/ավելացնելու հանրային աշխատանքների օրական ժամաքանակը՝ ներկայումս գործող առավելագույն 4 ժամի փոխարեն սահմանելով մինչև 8 ժամ տևողությամբ՝ պայմանավորված շահառուների կողմից պետության հանդեպ պարտավորություններն առավել վաղ ժամկետում կատարելու ցանկությամբ։

Շահառուի ներկայությունը դատարանում ապահովելու պարտականությունը. Շահառուին դատարան ներկայացնելու պարտականության հարցը գործնականում դժգոհությունների առիթ է դարձել դատարանների և Պրոբացիայի ծառայության միջև։ Դատավորները գտնում են, որ շահառուի ներկայությունը դատարանում ապահովելը Պրոբացիայի ծառայության խնդիրն է, իսկ Պրոբացիայի ծառայությունը գտնում է, որ դա դատարանի իրավասությունների տիրույթում է, վերջինս կարող է անձին հարկադրաբար ներկայացնել վարույթն իրականացնող մարմին՝ դատարան։

Հանրային աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրությունների, ուղեցույցերի, վիճակագրության բացակայություն. Հանրային աշխատանքների արդյունավետությունը համապարփակ գնահատելու համար անհրաժեշտ են հետադարձ ուսումնասիրություններ, վիճակագրություն, ուղղման օրինակներ, կրկնահանցագործությունների տվյալներ, որոնք, սակայն, հանրային աշխատանքներ պատժատեսակի մասով առանձին չեն վարվում։

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել և ընդլայնել ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թ.-ի N 452-Ն որոշման հավելվածի 43-րդ կետով սահմանված հանրային աշխատանքների տեսակները, դրանցում ներառելով, օրինակ՝ ոսկերիչի, արվեստի և արհեստի ոլորտի մասնագետի, բուժքրոջ/բուժակի, մայրապետի, վարորդի, զոդողի, խոհարարի, հրուշակագործի, դերձակի, շինարարության, վերանորոգման վարպետի, համատիրությունում իրավաբանի աշխատանքները։ Թվարկից հետո ցանկը թողնել բաց՝ նախատեսելով «այլ աշխատանքներ» հնարավորություն տալով նշանակել աշխատանք՝ ըստ շահառուի և դեպքի առանձնահատուկությունների։
- Մշակել հանրային աշխատանքների դատապարտված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման Հատուկ գործիք, որը կբացահայտի նաև շահառուների գենդերային, առողջական, տարիքային, կրթական, մասնագիտական և այլ առանձնահատկությունները։
- ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում «Հանրային աշխատանքները դատարանի նշանակած և իրավասու մարմնի որոշած վայրում» արտահայտությունը փոխարինել «Հանրային աշխատանքները դատարանի նշանակած և դատարանի կամ իրավասու մարմնի որոշած վայրում» արտահայտությամբ՝ դատարանին ևս հնարավորություն տալով ըստ անհրաժեշտության դատական ակտով սահմանելու հանրային աշխատանքների կատարման կոնկրետ վայրը /տե՛ս նաև Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգի 42-րդ կետը/։
- ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում «ոչ ավելի, քան օրական 4 ժամ տևողությամբ» արտահայտությունը փոխարինել «ոչ ավելի, քան օրական 8 ժամ տևողությամբ» արտահայտությամբ։

- Պրոբացիայի մասին ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասում «Էլեկտրոնային հսկողության միջոցների երկամսյա կիրառման երաշխիքային գումարի» արտահայտությունը փոխարինել «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման երաշխիքային գումարի» արտահայտությամբ՝ վերացնելով երկու ամսվա համար երաշխիքային գումարի փոխանցման նախապայմանը, քանի որ հանրային աշխատանքների առավելագույն տևողությունը մոտ 67 օր է, իսկ նվազագույն տևողությունը կարող է պակաս լինել անգամ 15 օրից։

ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դատարանում մեղադրյալի նկատմամբ հանրային աշխատանքներ պատիժ նշանակել հաշվի առնելով մեղադրյալի համաձայնությունը՝ դատարանի կողմից իրազեկման աշխատանք տանելով մեղադրյալի հետ, այնպես որ վերջինս գիտակցի առաջարկվող պատժատեսակի բնույթը, կարևորությունը, անհրաժեշտությունն ու նպատակը։
- Մեղադրյալի նկատմամբ որպես պատիժ հանրային աշխատանքներ նշանակելու կամ կրման ընթացքում որոշում կայացնելու շրջանակներում առողջական վիճակի գնահատումն իրականացնելիս չառաջնորդվել ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի N 825-Ն որոշմամբ, որը վերաբերելի է բացառապես ձերբակալված և կալանավորված անձանց, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալներին։ Որոշում կայացնել հիմք ընդունելով կոնկրետ վարույթով առկա բժշկական փաստաթղթերը՝ առանց Բժշկական հանձնաժողովի եզրակացության առկայության պարտադիր պահանջի։
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերի և 67-րդ հոդվածի 5-րդ մասի հակասությունների վերաբերյալ տրամադրել պաշտոնական պարզաբանում, այն մասին, թե առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձի կողմից հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում դատարանն իրավասու՞ է նշանակելու ազատազրկում, թե՝ ոչ։
- Պրոբացիայի շահառուին համապատասխան աշխատանքներն առաջարկելիս գործնականում հաշվի առնել պրոբացիայի շահառուի կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, ուշադրության արժանի այլ հանգամանքները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30 մարտի 2023 թվականի N 452-Ն որոշման 44-րդ կետը։
- Ընդլայնել հանրային աշխատանքների կատարման վայրերի ցանկը դրանում ներառելով մասնավոր ոլորտի կազմակերպություններին՝ հասարակական կազմակերպություններին, հանրային ծառայություններ մատուցող ընկերություններին /օրինակ՝ Ճանշին ՓԲԸ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ/, հանրօգուտ գործունեություն ծավալող կազմակերպություններին /օրինակ՝ սոցիալական խնամքի կենտրոններ/ և այլն։
- Դատարաններին /նաև դատավարության կողմերին՝ ըստ պահանջի/ տրամադրել հանրային աշխատանքների կատարման վայրերի և առաջարկվող աշխատանքների ցանկը /հընթացս պարբերաբար թարմացված ցանկը/։
- Դատավճռում ի լրումն պատժատեսակի, դատավորի սեփական նախաձեռնությամբ սահմանել հանրային աշխատանքների բնույթը (որպես անալոգիա, տե՛ս, օրինակ՝ թիվ

ԼԴ1/0025/01/21 դատական գործը[70])՝ հաշվի առնելով մեղադրյալի կողմից կատարված արարքի հանգամանքները, որոնք մանրամասն քննվել են դատական նիստերի ընթացքում։

- Դատավճռով նշանակված հանրային աշխատանքներ պատժատեսակը կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում դատապարտյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածին համապատասխան։
- Դատարանի կողմից ապահովել Պրոբացիայի շահառուի ներկայությունը դատական նիստերին՝ կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված դատավարական սանկցիան, այն է անձին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը։
- Հանրային աշխատանքներ իրականացնող շահառուներին ևս հնարավորություն ընձեռել մասնակցելու վերասոցիալականացման միջոցառումներին։
- Պրոբացիայի ծառայության կողմից 2022թ.-ին Արարատ գյուղում հիմնված մասնագիտական ուսուցման կենտրոնի օրինակով կենտրոններ հիմնել նաև Երևանում և ՀՀ մյուս մարզերում՝ համեմատաբար մեծ բնակավայրերում՝ ապահովելու հասանելիությունը, ինչպես նաև բացառելու շահառուների թիրախավորումը։
- Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման փուլում կիրառել էլեկտրոնային հսկողության միջոցներ՝ հիմք ընդունելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 29-րդ հոդվածի 5-րդ մասը և Պրոբացիայի մասին ՀՀ օրենքի 11-րդ գլուխը։ Հանրային աշխատանքների կատարման բովանդակային հսկողության նպատակով քննարկել նաև էլեկտրոնային հսկողությունը տեսախցիկների գործարկմամբ իրականացնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով բոլոր անձանց շահերի հավասարակշռությունը։
- Պրոբացիայի ծառայության մասին ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել հանրային աշխատանքների իրականացումը ոչ աշխատանքային ժամերին և օրերին։
- Ապահովել շահառուի մոտ ժամանակացույցի իր օրինակի առկայությունը։
- Գործատու կազմակերպությունների հետ համագործակցության խթանման նպատակով իրականացնել իրազեկման հանդիպումներ Հայաստանի Հանրապետությունում գործող բազմաոլորտ պետական, ոչ պետական, տեղական ինքնակառամարման, համայնքային, առևտրային և ոչ առևտրային, մասնավոր, հասարակական կազմակերպությունների շրջանում՝ Պրոբացիայի ծառայության գործառույթների, մասնավորապես հանրային աշխատանքներ պատժատեսակի բնույթի և գործատու կազմակերպությունների հետ համագործակցության կարևորության վերաբերյալ։
- Մշակել հանրային աշխատանքների վերաբերյալ ուղեցույցեր՝ դատավորների, դատախազների, Պրոբացիայի ծառայողների, փաստաբանների համար,
- Վարել առանձին վիճակագրություններ հանրային աշխատանքներ պատժատեսակի մասով, կատարել ուսումնասիրություններ, գնահատել արդյունավետությունը, անցկացնել վերապատրաստումներ։

[70] Թիվ ԼԴ1/0025/01/21 դատական գործ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438327300։